

Մոնիտորինգի հաշվետվություն

Համաձայնագիր Եվրոպական միության և
Հայաստանի Հանրապետության միջև վիզաների
տրամադրումը դյուրացնելու մասին



Երևան - 2014

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4
Ս 888



Ծրագիրն իրականացվել է Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի կողմից (ԳՏՀՎԿ)

Զեկույցի հեղինակներ՝
Տեքստի թարգմանիչ՝

Ստեփան Գրիգորյան
Նիկոլայ Իսրայելյան
Խաչատուր Ադումյան

Ս 888 Մոնիտորինգի հաշվետվություն/Համաձայնագիր Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին.-Եր .: Էդիթ Պրինտ, 2014. - 64 էջ:

Զեկույցի հեղինակները շնորհակալություն են հայտնում Լեհաստանի գիտությունների ակադեմիայի «Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը» ներկայացնող Յոաննա Ֆոմինային՝ զեկույցի վերաբերյալ օգտակար եւ կարեւոր մեկնաբանությունների համար:

Ուսումնասիրությունը իրականացվել է Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից: Սույն զեկույցի բովանդակությունը կարող է չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի տեսակետներին: Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ դրամաշնորհ N18668:



Բաց Հասարակության
Հիմնադրամներ
Հայաստան

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4

ISBN 978-9939-52-894-6

© ԳՏՀՎԿ, 2014, www.acgrc.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

Մեթոդաբանություն..... 9

Գլուխ առաջին. Եվրոպական միության և Հայաստանի
Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու
մասին համաձայնագիր՝ դրույթներ և պրակտիկա..... 12

Գլուխ երկրորդ. Հայաստանի Հանրապետության ոստիկանության
անձնագրային և վիզաների վարչություն և Հայաստանի
Հանրապետության տարածքային կառավարման նախարարության
միգրացիոն պետական ծառայություն..... 24

Գլուխ երրորդ. Արևելյան գործընկերության վիզաների
ազատականացման համաթիվը..... 33

Վերջաբան 36

Հղումներ 40

Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների
տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի տեքստը 41

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև
առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման
(ռեադմիսիայի) մասին համաձայնագրի ստորագրման մասին
մամուլի հաղորդագրության տեքստը 61

Ներածություն

Յուրաքանչյուր երկրի զարգացման և առաջընթացի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում շարժունությունը, ինչպես տարբեր ոլորտների մասնագետների, ուսանողների, փորձագետների, այնպես էլ ընդհանուր առմամբ մարդկանց միջև շփումներ /people-to-people contacts/, ինչը ուղղակիորեն նաև կապված է Հայաստանի Հանրապետության և այլ երկրների միջև գործող վիզային ռեժիմի հետ: Հարցը առավել կարևորվում է Հայաստանի Հանրապետություն - Եվրոպական միություն հարաբերությունների դեպքում:

Սույն ծրագրի շրջանակներում կատարվել է ուսումնասիրություն ՀՀ քաղաքացիների կողմից ԵՄ մուտքի արտոնագրերի ստացման վերաբերյալ: Այդ նպատակով ուսումնասիրվել են ոլորտին վերաբերող միջազգային և ներպետական օրենսդրությունը, այդ թվում՝ Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզայի տրամադրումը դյուրացնելու և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերը, կատարվել է նաև Հայաստանում գործող ԵՄ անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների (Գերմանիա, Լեհաստան, Ֆրանսիա, Իտալիա, Լիտվա, Հունաստան), ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիայի պետական ծառայության աշխատանքի ուսումնասիրություն: Կատարվել է նաև էլեկտրոնային մամուլի մշտադիտարկում՝ հաշվի առնելով սույն թվականի հունվարից վիզայի տրամադրումը դյուրացնելու ու ռեադմիսիայի մասին համաձայնագրերի ուժի մեջ մտնելու փաստը: Ծրագրի առաջին փուլում ուսումնասիրվել են նաև վեց ԵՄ հյուպատոսական բաժինների, վերոհիշյալ ՀՀ ներպետական մարմինների պաշտոնական կայքերը: Այնուհետև կազմվել են հարցաշարեր՝ ուղղված համապատասխան երկրների հյուպատոսներին և ՀՀ ներպետական մարմիններին, որոնց պատասխանները թույլ տվեցին կատարել հնարավորինս ամբողջական վերլուծություն վերոհիշյալ երկու համաձայնագրերի ուժի մեջ մտնելուց հետո իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև ուսումնասիրվել է Արևելյան գործընկերության ծրագրի մյուս երկրների փորձը /Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան/:

Սույն ծրագրի շահառուներն են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, լրագրողները, պետական մարմինները, քաղաքացիական հասարակության ակտիվ խմբերը, ինչպես նաև ողջ հասարակությունը:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են տեղեկատվական միջոցառումներ Գյումրիում և Երևանում, կազմակերպվել է նաև երկօրյա սեմինար Ծաղկաձորում՝ լրատվամիջոցների ներկայացուցիչների համար:

Գլոբալացման ժամանակակից աշխարհում վիզաների տրամադրումը և մարդկանց շարժունությունը անքակտելիորեն կապված է այնպիսի հարցերի հետ, ինչպիսիք են անօրինական միգրացիան, անվտանգությունը, փաստաթղթերի ու անձնական տվյալների պաշտպանվածությունը, սահմանների անվտանգությունը և կառավարումը, կազմակերպված հանցավորության, ահաբեկչության, խտրականության, կոռուպցիայի դեմ պայքարն ու կանխարգելումը, համագործակցությունը իրավապահ մարմինների միջև և այլն: Հայաստանի, ինչպես զարգացող երկրներից յուրաքանչյուրի համար, ԵՄ հետ հարաբերություններում առաջնահերթություններից մեկը հանդիսանում է շարժունությունը:

2009 թ. Արևելյան գործընկերություն ծրագիրը սկիզբ դրվեց Պրահայում, որտեղ ընդունվեց համանուն հռչակագիրը¹: 2010 թ. հուլիսին մեկնարկեցին ՀՀ-ԵՄ ստացման համաձայնագրի շուրջ բանակցությունները, իսկ 2012 թ. հունիսին՝ ստացման համաձայնագրի մաս կազմող Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու վերաբերյալ բանակցությունները, որոնք ավարտվեցին 2013 թ. հուլիսին:

Արևելյան գործընկերությունը (EaP) ԵՄ նախաձեռնությունն է՝ ուղղված Արևելյան Եվրոպայի ու Հարավային Կովկասի 6 պետություններին՝ Ուկրաինա, Մոլդովա, Բելառուս, Վրաստան, Հայաստան, Ադրբեջան: 2009թ. մայիսի 7-ին Պրահայում կայացավ ԵՄ և Արևելյան գործընկերության պետությունների ղեկավարների գագաթնաժողովը՝ ազդարարեց Արևելյան գործընկերության մեկնարկը: Գագաթնաժողովի ընթացքում ստորագրվել է Արևելյան գործընկերության վերաբերյալ համատեղ հռչակագիր՝ հիմք դնելով առավել սերտ համագործակցությանն ու նոր նախաձեռնությունների իրականացմանը²: Նախաձեռնության նպատակն է ԵՄ-ի և արևելյան գործընկերների միջև հարաբերությունների ամրա-

¹ Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit-
http://ec.europa.eu/europeaid/where/neighbourhood/eastern_partnership/documents/prague_summit_declaration_en.pdf

² “ARMENIA BETWEEN THE EUROPEAN UNION AND RUSSIA”, *Hasmik Grigoryan Expert, Armenia, Issue 1, 2014*,
<http://www.russkiivopros.com/?pag=one&id=563&kat=6&csl=65> ;
http://eeas.europa.eu/eastern/index_en.htm

պնդումը՝ խորացնելով քաղաքական ու տնտեսական համագործակցությունը:

ՀՀ-ԵՄ հարաբերությունների ակտիվ զարգացման փուլում 2012թ. փետրվարին Երևանում մեկնարկեցին ԵՄ հետ մուտքի վիզաների դյուրացման և հետընդունման համաձայնագրերի շուրջ բանակցությունները: Բանակցությունների երեք փուլերից հետո 2012թ. դեկտեմբերի 17-ին Հայաստանի և ԵՄ միջև ստորագրվեցին Վիզաների դյուրացման համաձայնագիրը, իսկ 2013թ. ապրիլի 19-ին՝ հետընդունման համաձայնագիրը³: Այդ համաձայնագրերը վավերացվեցին Եվրոպական խորհրդարանի կողմից 2013թ. հոկտեմբերի 9-ին, իսկ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013թ. նոյեմբերի 12-ին՝ ուժի մեջ մտնելով 2014թ. հունվարի 1-ից⁴:

ՀՀ կառավարության որոշմամբ ԵՄ անդամ և ԵՄ Շենգենի դրույթները կիրառող ԵՄ ոչ անդամ երկրների քաղաքացիների համար 2013թ. հունվարից սահմանվել է առանց մուտքի վիզայի այցելությունների ռեժիմ, ինչը շատ ողջունելի էր և կարևոր⁵:

2013 թ. սեպտեմբերի 3-ի ՀՀ-ի Նախագահի հայտնի ելույթից հետո հայտարարվեց արտաքին քաղաքական կուրսի կտրուկ փոփոխության մասին. Հայաստանը ցանկություն հայտնեց միանալ Մաքսային միությանը: Արտաքին քաղաքականության վեկտորի նման փոփոխությունը հանգեցրեց նրան, որ ԵՄ-Հայաստան հարաբերությունները սահմանափակվեցին միայն հումանիտար, գիտական, կրթական, մշակութային ոլորտներում համագործակցությամբ: Իսկ քանի որ վերոհիշյալ ոլորտներում համագործակցությունը նախատեսում է մարդանց ակտիվ տեղաշարժ, շարժունություն, ապա կարելի է եզրակացնել, որ վիզաների ոլորտը դառնում է չափազանց կարևոր: Այս իրավիճակը կպահպանվի, համենայնդեպս, մինչև ՀՀ-ԵՄ համագործակցության նոր ձևաչափի ձևավորումը:

Այսպիսով, 2014 թ. հունվարին ուժի մեջ մտան վերոհիշյալ երկու համաձայնագրերը, որոնց հիմնական նպատակն է կանոնակարգել և

³ <http://www.mfa.am/hy/country-by-country/eu/>

⁴ <http://www.europarl.europa.eu/news/en/news-room/content/20131004IPR21533/html/Visas-Parliament-gives-green-light-to-EU-Armenia-visa-facilitation-agreement> ,
http://armenianow.com/news/49985/armenia_eu_visa_facilitation_readmission_agreement_parliament_ratification

⁵ <http://www.mfa.am/hy/country-by-country/eu/>

հեշտացնել ՀՀ քաղաքացիների մի շարք կատեգորիաների համար վիզաների տրամադրման և վերադարձման հետ կապված խնդիրները: Սակայն հարկ է նշել քաղաքացիների ու ընդհանուր առմամբ ողջ հասարակության մոտ այդ հարցերի ու նոր կանոնների մասին տեղեկացվածության ցածր մակարդակի մասին, ինչը բերում է շատ դեպքերում քաղաքացիների իրավունքների ոտնահարման կամ խախտման: Հաշվի առնելով տեղեկացվածության ցածր մակարդակը՝ կարևորագույն խնդիր է դառնում նաև ՁԼՄ-ների տեղեկացվածության բարձրացման հարցը, քանի որ, ինչպես գիտենք, հենց նրանք են հանդիսանում հասարակության գիտակցության ձևավորման ամենաազդեցիկ գործիքներից մեկը: Տեղեկատվածության ցածր մակարդակը նաև պատճառ է մարդկանց մոտ ԵՄ-ի նկատմամբ բացասական վերաբերմունքի, կարծրատիպային մտածելակերպի ձևավորմանը: Բայց, քանի որ ԵՄ-ն և ՀՀ-ը վիզաների ոլորտում կատարել են մեծ աշխատանք, շատ կարևոր է, որ արդյունքները ավելի տեսանելի և շոշափելի լինեն:

ԵՄ-ի հետ առանց մուտքի վիզայի ռեժիմ ունենալու առաջին քայլը սովորաբար վիզաների դյուրացումն է (*visa facilitation*), որը պայմանավորված է ԵՄ-ի հետ ռեադմիսիայի մասին համաձայնագրի էֆեկտիվ իրականացմամբ: Համապատասխան երկրում վիզայի տրամադրումը դյուրացնելու և ռեադմիսիայի մասին համաձայնագրերի իրականացմամբ բավարարված լինելու դեպքում, ԵՄ-ն կարող է սկիզբ դնել վիզաների ազատականացման երկխոսությանը: Երկխոսությունը սովորաբար նշանակում է համապատասխան երկրում տարբեր ոլորտներում և անվտանգության ու միգրացիայի հետ կապված ինստիտուցիոնալ դաշտի իրավիճակի գնահատում, քայլերի ցանկի սահմանում, որոնք պետք է կատարել մինչև համապատասխան երկրին կարող է տրվել առանց մուտքի վիզայի ռեժիմ: Անհրաժեշտ քայլերի ցանկը պարունակող փաստաթղթերը հայտնի են «ճանապարհային քարտեզ» կամ «գործողությունների պլան» անունով: Վիզաների ազատականացման գործողությունների պլանով նախատեսված քայլերի իրականացումը կնպաստի կանոնակարգել միգրացիայի ոլորտը, ստեղծել գործուն մեխանիզմներ անօրինական միգրացիան մինիմալիզացման համար, ինչը իր հերթին կբերի հարակից մի շարք ոլորտներում /կազմակերպված հանցավորության, ահաբեկչության, խտրականության, կոռուպցիայի դեմ պայքարն ու կանխարգելումը, սահմանների վերահսկելիության աստիճանի բարձրացում և այլն/ իրավիճակի բարելավման և թույլ կտա բարձրացնել կառավարման մակարդակը:

Այս պահին Հայաստանը հաջողությամբ հաղթահարել է վիզաների ազտականացման առաջին քայլը: Այնուամենայնիվ պետք է նշել, որ վիզայի տրամադրումը դյուրացնելու և ռեադմիսիայի մասին համաձայնագրերը դեռ 6 ամիս է ինչ գործում են և դեռևս շուտ է եզրակացություններ անել դրանց ազդեցության մասին:

Այս համաձայնագրերի հաջող իրականացման համար, ինչպես նաև վիզաների ազատականացման շարունակման ուղղությամբ շարժվելու համար անհրաժեշտ է բոլոր գործող սուբյեկտների՝ Հայաստանի պետական մարմինների, ողջ հասարակության, հատկապես, հասարակության ակտիվ խմբերի, ինչպես նաև եվրոպական մարմինների կողմից հետևողական աշխատանք:

Վիզաների ազատականացման գործընթացը երկու կոմպոնենտ է պարունակում իր մեջ՝ տեխնիկական և քաղաքական, և գործընթացի շարունակման համար Հայաստանին անհրաժեշտ է շարունակել մի շարք ոլորտներում բարեփոխումներ իրականացնել՝ ԵՄ-ի կողմից սահմանված չափանիշներին համապատասխանելու համար, բայց պակաս կարևոր չէ նաև կայացնել քաղաքական որոշում և պատրաստակամություն հայտնել շարունակել գործընթացը:

Մրանք են սույն ծրագրի շրջանակներում այն հիմնական ձեռքբերումներն ու եզրակացությունները, որոնց մասին առավել մանրամասն և հանգամանալից կներկայացվի վերջաբանում:

Մեթոդաբանություն

Սույն ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են հետևյալ մեթոդները.

1. Հայկական ու եվրոպական համապատասխան օրենսդրության վերլուծություն

Ուսումնասիրվել է ուլտրտին վերաբերող թե՛ միջազգային, թե՛ ներպետական օրենսդրությունը: Նախ և առաջ ուսումնասիրվել են Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզայի տրամադրումը դյուրացնելու և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերը⁶, ԵՄ Վիզայի օրենսգիրքը (EU Visa Code)⁷, Շենգեն համաձայնագրերը (Schengen Agreements)⁸, Դուբլինյան կոնվենցիան և այլն: Ներպետական փաստաթղթերից ուսումնասիրվել են «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ԱԳՆ տարեկան հաշվետվությունները, միգրացիայի և ռեադմիսիայի վերաբերող ՀՀ կառավարության մի շարք որոշումներ և այլն:

2. ԵՄ հյուպատոսությունների և ՀՀ համապատասխան պետական կառույցների կայքերի ուսումնասիրություն

Հաշվի առնելով ժամանակակից աշխարհում համացանցից տեղեկությունների ստացման հնարավորության կարևորությունը՝ ուսումնասիրվել են ՀՀ-ում ԵՄ անդամ-երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների հյուպատոսական բաժինների, ՀՀ-ի ուլտրտի համար պատասխանատու պետական մարմինների պաշտոնական կայքերը, դրանցում պարունակվող տեղեկությունների թարմացված լինելը: Գաղտնիք չէ, որ կայքերը դառնում են տեղեկատվության ստացման ամենակարևոր աղբյուրը, որոնք պետք է պարունակեն ամենաթարմ տեղեկությունները, ինչը հատկապես կարևոր է վիզաների ու միգրացիայի հարցում: Ինչպես հայտնի է, համացանցից օգտվողների թվում գերակշռող մեծամասնություն կազմում են երիտասարդությունը և միջին տարիքի անձինք,

⁶ http://mfa.am/u_files/file/Agreement_EU_Readmissiom_Arm.pdf

⁷ <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2009:243:0001:0058:EN:PDF>

⁸ http://ec.europa.eu/dgs/home-affairs/e-library/documents/policies/borders-and-visas/schengen-agreements/index_en.htm , http://en.wikipedia.org/wiki/Schengen_Agreement

որոնք էլ կազմում են հասարակության առավել ակտիվ ու հաճախ տեղաշարժվող մասը: Այդ իսկ պատճառով հատկապես մեծ ուշադրություն ենք դարձրել համապատասխան կայքերի ուսումնասիրությանն ու պարունակող տեղեկատվության վերլուծությանը:

3. Հարցումներ

Օրենսդրության ու գործող կանոններին ծանոթանալուց հետո ծրագրի իրականացման առաջին փուլում կազմվել են հարցեր՝ ուղղված ոլորտի համար պատասխանատու պետական մարմիններին ու ԵՄ անդամ-երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների հյուպատոսական բաժիններին: Հարցերը կազմվել են, հաշվի առնելով թեմայի հասարակության լայն շերտերի համար վիզաների և միգրացիայի կարևորությունը, հատկապես առօրյայում, մամուլում առավել հաճախ հանդիպող խնդիրներն ու դեպքերը: Անհատական հանդիպումներ են անցկացվել նաև մի շարք ազգային և միջազգային փորձագետների (Գերմանիա, Նիդերլանդներ, Լեհաստան, Լիտվա, Ուկրաինա) հետ, որոնց ընթացքում փորձել ենք պարզել, որոնք են մարդկանց իրավունքների խախտման, վիզայի մերժումների ամենատարածված դեպքերը, պատճառները, ինչ քայլեր պետք է անեն անձինք սխալներից հնարավորինս խուսափելու համար:

4. Էլեկտրոնային մամուլի մշտադիտարկում (մոնիտորինգ)

Կարևորելով համացանցի տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրներից մեկը լինելը, ինչպես նաև հասարակության մոտ տեղեկացվածության ցածր մակարդակը, կատարվել է նաև էլեկտրոնային մամուլի մշտադիտարկում (մոնիտորինգ), ինչը թույլ է տվել կատարել նշված ոլորտների համեմատական վերլուծություն և հետևել, թե ինչպես են լուսաբանվում այս կամ այն իրադարձությունները լրատվամիջոցներում: Մշտադիտարկման համար ընտրվել են առավել շատ ընթերցվող լրատվական կայքերը: Պետք է նշել, որ առանց էլեկտրոնային մամուլի մշտադիտարկման մեր վերլուծությունը կլիներ թերի և միակողմանի, քանի որ հենց լրատվամիջոցներն են հանդիսանում հասարակության համար լրատվության ստացման աղբյուր, և նրանց կողմից ճշգրիտ տեղեկությունների տարածումը շատ կարևոր է:

5. Վիճակագրական փաստաթղթերի ուսումնասիրություն

Ուսումնասիրվել է նաև այս ոլորտում Արևելյան գործընկերու-

թյուն ծրագրի մյուս երկրների փորձը /Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան/, որոնք արդեն հաղթահարել են վիզայի ազատականացման առաջին փուլը, իսկ որոշ դեպքերում /ինպես օրինակ՝ Մոլդովան/ հաջողությամբ հասել ԵՄ-ի հետ առանց վիզայի ռեժիմի:

Գլուխ առաջին

Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիր⁹, դրույթներ և պրակտիկա

Նշենք Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրով նախատեսված հիմնական փոփոխությունները.

- ✓ Ավելի հեշտ՝ ավելի քիչ փաստաթղթեր են անհրաժեշտ վիզայի համար դիմելիս (Հոդված 4):
- ✓ Ավելի էժան՝ վիզայի արժեքը 60 եվրոյի փոխարեն կազմում է 35 եվրո, իսկ մի շարք կատեգորիաների համար նաև անվճար (Հոդված 6):
- ✓ Ավելի արագ՝ վիզայի տրամադրման վերաբերյալ որոշումը կայացվում է 10 օրում /միայն առանձին դեպքերում այն կարող է երկարացվել մինչև 30 օր/ (Հոդված 7):

Վիզայի տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրով Հայաստանի քաղաքացիների հետևյալ կատեգորիաները օգտվում են վիզայի ստացման դյուրացված կարգից.

- մերձավոր ազգականներ՝ տատիկներ, պապիկներ, թոռներ տարածքում օրինական կերպով բնակվող Հայաստանի քաղաքացիներին կամ Եվրոպական միության քաղաքացիներին, ովքեր բնակվում են այն անդամ պետության տարածքում, որի քաղաքացիներն են
- պաշտոնական պատվիրակության անդամներ
- դպրոցականների, ուսանողների, հետբուհական ուսուցում ստացող անձանց
և ուղեկցող ուսուցիչների համար
- բուժման նպատակներով ճամփորդող և անհրաժեշտ՝ ուղեկցող անձանց
- լրագրողների և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող տեխնիկական անձնակազմ
- միջազգային սպորտային միջոցառումների մասնակիցների և

⁹ http://www.mfa.am/u_files/file/EU_AM_VFA_am.pdf

մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող անձանց

- գործարարների և բիզնես կազմակերպությունների ներկայացուցիչների միջազգային ցուցահանդեսներին, խորհրդաժողովներին, գիտաժողովներին, սեմինարներին կամ այլ նմանատիպ միջոցառումներին մասնակցող մասնագետներ
- քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և անդամ պետություններում գրանցված հայկական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հրավիրված անձ
- գիտական, ակադեմիական, մշակութային և գեղարվեստական աշխատանքներին մասնակցող անձանց համար՝ ներառյալ համալսարանական և այլ փոխանակման ծրագրերը
- Հայաստանում գրանցված տրանսպորտային միջոցների վարորդների համար, ովքեր իրականացնում են միջազգային բեռնափոխադրումների և ուղևորների փոխադրման ծառայություններ
- քույր քաղաքների և այլ քաղաքային մարմինների կողմից կազմակերպված պաշտոնական փոխանակման ծրագրերի մասնակիցներ
- զինվորական և քաղաքացիական շիրիմներ այցելելու համար

Վիզայի դիմումների հետ կապված ձևակերպումների համար վճարներից ազատվում են հետևյալ անձանց կատեգորիաները. ա) թոշակառուները, բ) 12 տարեկանից ցածր տարիք ունեցող երեխաները, գ) ազգային ու տարածաշրջանային կառավարությունների և սահմանադրական ու գերագույն դատարանների անդամները, եթե նրանք սույն համաձայնագրով ազատված չեն վիզայի պահանջից, դ) հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ուղեկցող անձինք՝ ըստ անհրաժեշտության, ե) անդամ պետությունների տարածքներում օրինական կերպով բնակվող Հայաստանի քաղաքացիներին կամ Եվրոպական միության քաղաքացիներին, ովքեր բնակվում են այն անդամ պետության տարածքում, որի քաղաքացիներն են, այցելող մերձավոր ազգականները՝ ամուսինը, երեխաները (ներառյալ որդեգրվածները), ծնողները (ներառյալ խնամակալները), տատիկները, պապիկները, թոռները, գ) պաշտոնական պատվիրակության անդամները՝ ներառյալ պաշտոնական պատվիրակությունների մշտական անդամները, ովքեր Հայաստանին հասցեագրված պաշտոնական հրավերի հիման վրա մասնակցում են հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին կամ փոխանակման

ծրագրերին, ինչպես նաև միջկառավարական կազմակերպությունների կողմից անդամ պետությունների տարածքներում կազմակերպվող միջոցառումներին, է) դպրոցականները, ուսանողները, հետբուհական ուսուցում ստացող անձինք և ուղեկցող ուսուցիչները, ովքեր ճամփորդություն են ձեռնարկում ուսման կամ կրթական վերապատրաստման նպատակով, ներառյալ՝ փոխանակման ծրագրերի, ինչպես նաև դպրոցի հետ կապված գործունեության այլ ոլորտների շրջանակում, ը) լրագրողները և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող տեխնիկական անձնակազմը, թ) միջազգային սպորտային միջոցառումների մասնակիցները և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող անձինք, ժ) քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և անդամ պետություններում գրանցված հայկական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հրավիրված անձինք, որոնք ճամփորդություն են ձեռնարկում կրթական վերապատրաստումներին, սեմինարներին, խորհրդաժողովներին՝ ներառյալ փոխանակման ծրագրերի կամ համահայկական և համայնքային աջակցության ծրագրերի շրջանակներում մասնակցելու նպատակով, ժա) գիտական, ակադեմիական, մշակութային և գեղարվեստական աշխատանքներին մասնակցող անձինք՝ ներառյալ համալսարանական և այլ փոխանակման ծրագրերը, ժբ) այն անձինք, ովքեր ներկայացրել են մարդասիրական նկատառումներով, ներառյալ՝ շտապ բժշկական օգնություն ստանալու համար, իրենց ճամփորդության անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթղթեր, և նման անձին ուղեկցող անձը, կամ մերձավոր ազգականի հուղարկավորությանը մասնակցելու կամ ծանր հիվանդ մերձավոր ազգականին այցելելու համար:

ԵՄ անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունները և հյուպատոսական հիմնարկները մինչև մեկ տարվա ¹⁰ վավերակա-

¹⁰ Պետք է հիշել, որ վիզայի վրա նշված ամսաթվերը իրավունք չեն տալիս այդ ողջ ընթացքում գտնվել Շենգեն գոտում: Միանգամայա մուտքի արտոնագրերը տեղեկություն են տրամադրում թույլատրվող օրերի վերաբերյալ/օր.՝ 15 օր/: Այլ է խնդիրը բազմակի մուտքի իրավունքով վիզաների դեպքում. թույլատրվում է գտնվել Շենգեն գոտում մինչև 90 օր յուրաքանչյուր 180 օր ժամանակահատվածի ընթացքում: Վիզայի Շենգեն գոտու մնացորդ օրերի մասին կարող եք տեղեկանալ՝ օգտվելով Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական «Շենգենյան հաշվիչից»՝ http://ec.europa.eu/dgs/home-affairs/what-we-do/policies/borders-and-visas/border-crossing/schengen_calculator_en.html:

նությանը բազմակի մուտքի վիզաներ են տրամադրում պայմանով, որ նախորդ տարվա ընթացքում նրանք ստացել են նվազագույնը մեկ վիզա և օգտվել դրանից՝ այցելած անդամ պետության մուտքի և գտնվելու վերաբերյալ օրենքներին համապատասխան:

Անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունները և հյուպատոսական հիմնարկները առնվազն 2 տարվա և առավելագույնը 5 տարվա վավերականությամբ բազմակի վիզաներ են տրամադրում վերոնշյալ քաղաքացիների կատեգորիաներին՝ պայմանով, որ նախորդ 2 տարվա ընթացքում նրանք օգտվել են մեկ տարվա բազմակի մուտքի վիզաներից՝ այցելած անդամ պետության՝ մուտքի և գտնվելու վերաբերյալ օրենքներին համապատասխան, եթե հաճախակի կամ կանոնավոր կերպով ճամփորդելու անհրաժեշտությունը կամ մտադրությունն ակնհայտ կերպով չի սահմանափակվում ավելի կարճ ժամանակահատվածով. այդ դեպքում բազմակի մուտքի վիզաների վավերականության ժամկետը սահմանափակվում է այդ ժամանակահատվածով:

Հիմնավորված հրատապ դեպքերում հյուպատոսարանը կարող է դիմողներին թույլ տալ իրենց դիմումները ներկայացնել առանց հարցազրույց անցնելու, կամ հարցազրույցը կազմակերպել անմիջապես:

Սույն համաձայնագրով երկրները կարելի է բաժանել 3 խմբերի.

- Շենգենյան համաձայնագրերի լիիրավ անդամ-երկրներ /Ավստրիա, Բելգիա, Հունգարիա, Գերմանիա, Հունաստան, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդերլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Չեխիա, Շվեդիա, Էստոնիա/, որոնց համար պարտադիր են համաձայնագրի դրույթները: Իսլանդիան, Լիխտենշտեյնը, Նորվեգիան և Շվեյցարիան չնայած հանդիսանում են Շենգենյան համաձայնագրերի լիիրավ անդամներ, սակայն չեն հանդիսանում ԵՄ անդամներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ստորագրված վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի կողմ: Անհրաժեշտ է, որ Շվեյցարիայի, Իսլանդիայի, Լիխտենշտեյնի և Նորվեգիայի ու Հայաստանի իշխանությունները կնքեն կարճաժամկետ վիզաների տրամադրումը դյուրացնելու վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր՝ Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև Համաձայնագրի նմանատիպ պայմաններով (տե՛ս վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին

համաձայնագիրը)¹¹:

- Երկրներ, որոնց հետ անհրաժեշտ է նաև երկկողմ համաձայնագրեր կնքել /Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Դանիա/:
- Շենգենյան համաձայնագրերի ոչ լիիրավ անդամ-երկրներ, որոնք կարող են տրամադրել միայն ազգային վիզաներ, սակայն Շենգենյան գոտու համար նախատեսված վիզաները վավերական են իրենց տարածքում /Բուլղարիայի, Կիպրոսի, Ռումինիա/:

Շատ երկրներում գործում են ասպես կոչված «վիզային կենտրոններ», երբ դեսպանությունը իրավունք է տալիս այլ կազմակերպության քաղաքացիներից վիզաների դիմում-հայտեր ընդունելու: Դրա մասին կա հիշատակում վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրում, ըստ որի «արտաքին ծառայություն մատուցողը կարող է ծառայության դիմաց վճար գանձել քաղաքացիներից»: Ըստ համաձայնագրի «այս վճարը պետք է համաչափ լինի արտաքին ծառայություն մատուցողի՝ իր գործառույթներն իրականացնելու ընթացքում կատարած ծախսերին և չպետք է գերազանցի 30 եվրոն» (վիզայի տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի Հոդված 6, կետ 3): Դիմողներին հնարավորություն է ընձեռվում նաև իրենց դիմումները անմիջականորեն հանձնելու հյուպատոսարաններին առանց միջնորդ-կազմակերպությունների: Միության համար արտաքին ծառայություն մատուցողն իր գործողություններն իրականացնում է Վիզայի օրենսգրքին համապատասխան և պարտավորվում է լիարժեք կերպով պահպանել Հայաստանի օրենսդրությունը: Հայաստանում նման կենտրոն բացվել է Մեծ Բրիտանիայի դեսպանության կողմից, որտեղ բացի վիզայի համար նախատեսված գումարից գանձվում է նաև 59 ֆունտ գումար՝ ծառայություններ մատուցելու համար, իսկ արդեն սույն թվականի հունիսին Երևանում բացվել է նաև իսպանական վիզաների կենտրոն:

Չնայած նրան, որ այս համաձայնագրով նախատեսվում է վիզայի տրամադրման դյուրացում քաղաքացիների մի շարք կատեգորիաների համար, պետք է հիշել, որ սա նաև բարդ բյուրոկրատական գործընթաց է, և, որ վիզա տրամադրել-չտրամադրելու որոշման կայացումը պարունակում է նաև որոշակի սուբյեկտիվ գործոն: Վիզայի տրամադրման այդ

¹¹ http://ec.europa.eu/dgs/home-affairs/what-we-do/policies/borders-and-visas/schengen/index_en.htm

սուբյեկտիվ պահին նաև ավելանում է սահմանի վրա սահմանապահի որոշում կայացնելու հարցը՝ թույլատրել, թե ոչ, այսինքն, վիզա ունենալու փաստը չի բացառում սահմանի վրա մուտքի թույլտվություն չստանալու հնարավորությունը (սակայն պետք է նշել, որ դա կիրառվում է միայն բացառիկ դեպքերում), քանի որ մուտքի երկրի սահմանային կետն է հանդիսանում երկիր մուտք գործելու վերջին «անցակետը»:

Դիտարկելով վիզայի տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի դրույթները՝ մենք կկենտրոնանանք գործնականում դրա կիրառման վրա: Մեր ուսումնասիրության հիմնական ոլորտներից մեկը հանդիսանում է ԵՄ անդամ-երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների հյուպատոսական բաժինների գործունեության ուսումնասիրությունը: Այս ուսումնասիրության ընթացքում նախ և առաջ ուսումնասիրվել են հյուպատոսական բաժինների պաշտոնական կայքերը, արդյոք ինչքան՝ ով է թարմացված ներկայացված տեղեկատվությունը, ինչքան՝ վ է հարմարեցված ՀՀ քաղաքացու համար: Այնուհետև կազմվել են հարցեր՝ ուղղված համապատասխան երկրների հյուպատոսներին, որոնք թույլ կտան հնարավորինս ամբողջական պատկեր ստանալ հյուպատոսական բաժինների գործունեության մասին վերոհիշյալ երկու համաձայնագրերի (Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզայի տրամադրումը դյուրացնելու և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերը) ուժի մեջ մտնելուց հետո: Եղել են նաև հանդիպումներ հյուպատոսարանների ներկայացուցիչների հետ:

Հարցերը հետևյալն են.

- ❖ Արդյո՞ք Հայաստանում ԵՄ-ի անդամ-երկրների դեսպանությունները ունեն վիզա ստանալու պահանջվող փաստաթղթերի միասնական ցանկ:
- ❖ Արդյո՞ք վիզայի տրամադրման նոր կանոնների վերաբերյալ կան տեղեկություններ Հայաստանում ԵՄ-ի անդամ-երկրների դեսպանության պաշտոնական կայքում և, եթե այո՝, ապա՝ ի՞նչ լեզվով /լեզուներով:
- ❖ Արդյո՞ք Հայաստանում ԵՄ-ի անդամ-երկրների դեսպանության պաշտոնական կայքում կան տեղեկություններ այլ երկրների մասին, որոնց վիզան ևս տրամադրում է տվյալ հյուպատոսական բաժինը
- ❖ Ինչպիսի՞ն է երկարաժամկետ և բազմակի վիզաների տրամադրման գործընթացը

- ❖ Ինչպիսի՞ն է ս. թ. հունվարի 1-ից հետո վիզաների մերժման վիճակագրությունը
- ❖ Որո՞նք են վիզայի մերժման հիմնական, առավել տարածված պատճառները

Ստացված պատասխանները ուսումնասիրվել են և վերլուծվել, դրա հիման վրա ստորև ներկայացնում ենք ստացված արդյունքներն ըստ երկրների:

➤ **Գերմանիա**

Գերմանիայի դեսպանության պաշտոնական կայքը թարմացված է և պարունակում է բավականին մանրամասն տեղեկություններ ինչպես ս. թ. հունվարից ուժի մեջ մտած համաձայնագրերի մասին, այնպես էլ ամբողջական տեղեկություններ է պարունակում վիզայի դիմելու համար անհրաժեշտ ողջ գործընթացի մասին հայերենով և գերմաներենով /հակիրճ ինֆորմացիա կա նաև անգլերենով/: Կայքը առցանց գրանցման հնարավորություն է տալիս, ինչը շատ հարմար է դիմողների համար, ինչպես նաև նշված են այն երկրները (Բելգիա, Լյուքսեմբուրգ, Շվեդիա, Ավստրա, Նիդերլանդներ), որոնց վիզաների ստացման համար պետք է դիմել Գերմանիայի դեսպանություն: Կայքում նաև տեղադրված են հուշաթերթիկներ, որոնք մատչելի ձևով ներկայացնում են դիմողի քայլերը վիզայի դիմելու համար: Ի պատասխան մեր գրավոր հարցման Գերմանիայի հյուպատոսը ներկայացրել է նաև մերժումների վիճակագրությունը սույն թվականի հունվարից ի վեր (մոտ 10 %), ինչը գրեթե նույն մակարդակի վրա է 2013 թվականի հետ համեմատած: Գերմանիայի դեսպանություն ըստ հյուպատոսի պատասխանի մերժման հետ դիմողին տրվում է գրավոր պատասխան՝ մերժման պատճառների հիմնավորմամբ (մինչ այդ հյուպատոսը պարտավորված չէր ներկայացնել գրավոր մերժման հիմնավորում): Դիմողը կարող է պահանջել վերանայել իր դիմումը, ինչպես նաև իրավունք ունի որոշումը բողոքարկել Գերմանիայի համապատասխան դատարանում:

Սակայն քաղաքացիները շատ հաճախ տեղյակ չեն օրենքի այդ դրույթների մասին, սա ևս մեկ անգամ փաստում է նման նախաձեռնությունների և նախագծերի կարևորության մասին քաղաքացիների իրազեկման բարձրացման, իրենց իրավունքների պաշտպանության հարցերում:

➤ **Լեհաստան**

Լեհաստանի դեսպանության հյուպատոսական բաժինը ևս շատ պատրաստակամ է համագործակցության և բարձր մակարդակի վրա է կազմակերպել ինչպես քաղաքացիների ընդունելության հետ կապված ամենօրյա աշխատանքները, այնպես էլ հնարավորինս մանրամասն և ամբողջական տեղեկատվություն է տեղադրված պաշտոնական կայքում: Կայքում նշված են այն երկրները, որոնց վիզաները տրվում են լեհական հյուպատոսությունում, բացի Լեհաստանից. դրանք են՝ Չեխիան, Սլովենիան, Սլովակիան, իսկ 2014 թ. մարտից՝ նաև Շվեյցարիան: Յուրաքանչյուր երկրի համար երեք լեզուներով (լեհերեն, հայերեն, անգլերեն) տրվում է մանրամասն տեղեկատվություն վիզա ստանալու համար դիմելիս անհրաժեշտ փաստաթղթերի, հերթագրման կարգի, մերժման դեպքում բողոքարկման հնարավորության և այլնի մասին: Կայքում կարող ենք գտնել նաև տեղեկատվություն վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի վերաբերյալ, դրանով նախատեսված հիմնական նորամուծությունների մասին: Համաձայն հուպատոսական բաժնի տրամադրած տվյալների Լեհաստանի դեսպանությունում ս. թ. հունվարից ի վեր մերժումները կազմել են դիմումների մոտ 14 % /տրվել են 407 վիզա, մերժվել՝ 59/: Որպես մերժման ամենահաճախ հանդիպող պատճառ նշվում է ուղևորության նպատակը պատշաճ ձևով չհիմնավորելը: Հետաքրքիր քայլ էր Լեհաստանի կողմից 2014 թ. հունվարից ՀՀ քաղաքացիներին 6 ամիս ժամկետով առանց հատուկ թույլտվության Լեհաստանում աշխատելու իրավունքի մասին որոշումը, ինչը նշանակում է, որ աստիճանաբար դրական փոփոխություններ են տեղի ունենում ՀՀ քաղաքացիների հանդեպ եվրոպացիների վերաբերմունքի մեջ:

➤ **Ֆրանսիա**

Ֆրանսիայի դեսպանության հյուպատոսական բաժնի պաշտոնական կայքը թարմացված է, կա հիշատակում նոր կանոնների վերաբերյալ և պարունակում է վիզայի համար դիմելիս քաղաքացիներին անհրաժեշտ մանրամասն տեղեկություններ հայերենով և ֆրանսերենով: Բացի ֆրանսիական վիզաներից Ֆրանսիայի դեսպանության հյուպատոսական բաժինը պատասխանատու է նաև Պորտուգալիայի և Իսլանդիայի վիզաների համար: Վիզայի համար քաղաքացիները պետք է հերթագրվեն առցանց: Միայն Ֆրանսիայի դեսպանության կայքում են ներկայացված տեղեկություններ Հայաստանում ԵՄ մյուս անդամ-երկրների դեսպանու-

թյունների վերաբերյալ, ինչը գովելի է և հարմար: Ֆրանսիայի հյուպատոսսարանը մեր նամակ-հարցմանը պատասխանում նշել է, որ մեր բարձրացրած հարցերի վերաբերյալ տեղեկությունները կարող ենք գտնել իրենց կայքում, բացի վիճակագրությունից, այդ իսկ պատճառով մենք չենք տիրապետում ֆրանսիական հյուպատոսության վիզաների վերաբերյալ այս տարվա վիճակագրական տվյալներին:

➤ **Իտալիա**

Իտալիայի հյուպատոսսարանը ևս պատասխանել է մեր հարցմանը, ըստ որի մերժումը կազմում է մոտ 7 % /տրվել են 1867 վիզա, մերժվել՝ 135/: Չնայած Իտալիայի դեսպանության հյուպատոսական բաժնի պաշտոնական կայքը, ի տարբերություն վերոնշյալ մյուս երեք երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների կայքի, բավականին աղքատիկ է, չկա որևէ հիշատակում նոր կանոնների մասին, սակայն ըստ իրենց պատասխանի այժմ տարվում են աշխատանքներ կայքը թարմացնելու ուղղությամբ: Վիզաների վերաբերյալ ինֆորմացիան շատ ընդհանուր է, բարդ և խճճված ու միայն անզլերենով, նշված չեն այն երկրները, որոնց վիզայի համար ևս պետք է դիմել Իտալիայի դեսպանություն /այդ երկրներն են՝ Մալթան և Ֆինլանդիան/, ինչպես նաև չկա առցանց գրանցման հնարավորություն: Որպես մերժման հիմնական պատճառներ նշվում են կեղծված կամ թերի փաստաթղթերը, ուղևորության նպատակի չհիմնավորելը:

➤ **Լիտվա**

Լիտվայի հյուպատոսսարանի կողմից ևս պատրաստակամություն է հայտնվել պատասխանել բոլոր հարցերին և տեղեկացրել են, որ տարվում են աշխատանքներ կայքը համապատասխան տեղեկություններով համալրելու համար, ինչը շատ գովելի է: Լիտվայի դիվանագիտական ներկայացուցչության կայքում դեռ չկան նոր փոփոխությունների մասին տեղեկություններ, կա ընդհանուր տեղեկատվություն վիզայի դիմելու համար և առցանց գրանցման հնարավորություն: Բացի լիտվական վիզաներից, այստեղ են տրամադրվում նաև հետևյալ երկրների վիզաները՝ Լատվիա, Էստոնիա, Դանիա, Իսպանիա և Հունգարիա: Այստեղ հատուկ ուզում ենք նշել, որ շատ ողջունելի է, որ լիտվական դեսպանությունը տրամադրում է Հայաստանում հյուպատոսություններ չունեցող մի շարք այլ ԵՄ երկրների վիզաներ: Մինչ այդ ՀՀ քաղաքացիները ստիպված էին մի շարք

երկրների վիզա ստանալու համար մեկնել Թբիլիսի կամ Մոսկվա: Դա վերջին մի քանի տարիների լիտովական դեսպանատան և հյուպատոսության ակտիվ աշխատանքի արդյունքն է: Ողջունելի է նաև, որ Լիտվայի նման մի շարք այլ դեսպանություններ ևս նույն կերպ են վարվել: Դա մեծ ձեռքբերում է Հայաստանի քաղաքացիների համար:

➤ **Հունաստան**

Հունաստանի դեսպանությունը այն միակ ԵՄ անդամ-երկրի դիվանագիտական ներկայացուցչությունն է, որը որևէ կերպ չի արձագանքել մեր նամակ-հարցմանը: Պաշտոնական կայքում ներկայացված չեն նոր կանոնների մասին տեղեկություններ, իսկ եղածը միայն ազլերենով ու հունարենով է:

Չնայած նրան, որ որոշ դեսպանություններ բավականին լավ են կազմակերպել վիզայի ստացման համար դիմող քաղաքացիների ընդունելության հարցը, սակայն անհրաժեշտ է նշել, որ, հատկապես ամառային հանգստի շրջանում այն դեսպանություններում, որոնք բացի իրենց երկրի վիզաներից տրամադրում են նաև ԵՄ այլ երկրների վիզաներ, գոյանում են հերթեր, դժվարություններ են առաջանում նաև առցանց գրանցվելու հետ կապված: Հատկապես մեր հարցումներից հետո այս խնդիրների հաղթահարման ուղղությամբ հյուպատոսարանները քայլեր են ձեռնարկել, սակայն հուսով ենք, որ հետագայում ևս, ելնելով անհրաժեշտությունից, կմեծացնեն իրենց թողունակությունը՝ հաշվի առնելով նաև սեզոնայնության գործոնը: Քանի որ փորձը և մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս որոշ դեպքերում հերթեր են գոյանում և առանձին դեպքերում մարդիկ չեն հասցնում ժամանակին վիզա ստանալ: Այս առումով շատ կարևորվում է դեսպանությունների տեխնիկական հագեցվածության, մարդկային ռեսուրսների ավելացման, հերթերի կազմակերպման, նստատեղերի առկայության և այլ հարցեր:

Ըստ հյուպատոսարանների պատասխանների երկարաժամկետ և բազմակի վիզաների տրամադրման գործընթացը գրեթե նույնն է, ինչ միանգամյա վիզաների դեպքում, միայն այս դեպքում անհրաժեշտ է լինում հիմնավորել հաճախակի այցելությունների նպատակը: Սակայն մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դեսպանությունները այնքան էլ հակված չեն երկարաժամկետ վիզաներ տրամադրել:

Համեմատելով ՀՀ-ում ԵՄ դեսպանությունների հյուպատոսական բաժինների պաշտոնական կայքերում տեղադրված տեղեկությունները,

դրանց աշխատանքն ու վիզայի տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագրի դրույթները, պարզ է դառնում, որ միշտ չէ, որ հյուպատոսությունները ամբողջովին հետևում են համաձայնագրին: Տարբեր հյուպատոսություններ տարբեր կերպ են հետևում համաձայնագրի դրույթներին, տարբեր կերպ է կազմակերպվում նաև նրանց ամենօրյա աշխատանքը:

ՀՀ-ում որոշ դեպքանությունների հյուպատոսական բաժիններ, անտեսելով կամ այդքան էլ ուշադրություն չդարձնելով վիզայի տրամադրման դյուրացման մասին համաձայնագրի դրույթների վրա, որոշ դեպքերում մերժում են վիզայի տրամադրումը առանց պատշաճ հիմնավորման: Նման դեպքերի մասին կա քաղաքացիների մի շարք բողոքներ, դժգոհություններ, այդ թվում հարցը բարձրացվում է նաև սոցիալական ցանցերում: Հատկապես հաճախ են լինում դեպքեր, երբ մերժում են երկարաժամկետ /մեկ տարվա/ բազմակի մուտքով վիզան, փոխարենը տրամադրելով ավելի կարճ ժամկետով վիզա /օրինակ՝ մեկ տարվա փոխարեն՝ 6-ամսյա/, ինչի մասին արդեն քիչ առաջ նշեցինք: Նման դեպքերում քաղաքացիներն իրավունք ունեն պահանջել վերանայել գործը կամ նորից դիմել՝ հղում կատարելով համաձայնագրի համապատասխան կետերին: Չնայած, իհարկե, այս դեպքերում ևս հաջողությունը երաշխավորված չէ, և չկա որևէ գործուն լծակ որոշման վրա ազդելու համար:

Այդ իսկ պատճառով կարևորում ենք հետազայում հարցումներ անցկացնել հատկապես վիզայի դիմած, բայց մերժում ստացած քաղաքացիների շրջանում, քանի որ առանձին դեպքերում մերժումները լինում առանց հյուպատոսությունների կողմից հիմնավորման, բացի դրանից կարևոր է նաև քաղաքացիներին տեղեկացնել մերժման բողոքարկման մեխանիզմների մասին:

Հյուպատոսական անձնակազմը պետք է հարգի մարդկային արժանապատվությունը՝ խտրականություն չդնելով մարդկանց միջև՝ նրանց սեռի, ռասսայական, էթնիկական պատկանելության, կրոնի, տարիքի ու սեռական կողմնորոշման հիման վրա: Հյուպատոսական անձնակազմի կողմից դիմողների իրավունքների խախտման դեպքում նրանք կարող են նաև բողոքել հյուպատոսարանի վերադասներին կամ տվյալ երկրի արտաքին գործերի նախարարությանը /շատ ԵՄ երկրների ԱԳՆ-երի նախարարությունների կայքերում հետադարձ կապի հնարավորություն է տրվում/: ՀՀ քաղաքացիներին խորհուրդ ենք տալիս նաև վիզայի հետ

կապված հարցերով ուսումնասիրել Եվրոպան առանց վիզաների կո-ալիցիայի կայքը՝ www.visa-free-europe.eu, որտեղ հնարավորություն կատեղեկացնել, բարձրաձայնել բողոքների ու դժգոհությունների դեպքերի մասին հետևյալ հղումով՝ <http://visa-free-europe.eu/about-us/visa-whistle-blower/>:

Մեր ժամանակների մասին վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը հետաքրքիր է նաև հարևան երկրների տվյալների հետ համեմատելիս: Այսպես, օրինակ, ըստ «Democracy & Freedom Watch» կայքի տվյալների, Արևելյան գործընկերության անդամ-երկրների և Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներին վիզայի տրամադրման մերժման մակարդակով 2013 թ. առաջին տեղում է գտնվում Վրաստանը՝ 12%-ով, երկրորդ տեղում է Հայաստանը՝ 11 %, այնուհետ Մոլդովան՝ 4.8 %, Ադրբեջանը՝ 4.2 %, Ուկրաինան՝ 1.9 %, Ռուսաստանի Դաշնությունը՝ 1 % և Բելառուսը՝ 0.8 %¹²: Ինչպես տեսնում ենք, ըստ մեր ժամանակների քանակի Հայաստանը երկրորդ տեղում է, հատկապես հետաքրքիր է, որ Վրաստանն ու Հայաստանը մեր ժամանակների 12-11 % -ով «առաջատար» դիրքերում են և նրանց հաջորդող երկրների տվյալների անհամեմատ ցածր են: Սա, երևի թե, առանձին հետազոտության կարիք ունի հետազայում:

¹² <http://dfwatch.net/georgia-on-top-of-eu-visa-rejection-list-89200>

Գլուխ երկրորդ

Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն

Այս ծրագրի շրջանակներում կատարված մոնիտորինգի մյուս մասը կազմում է ոլորտի համար պատասխանատու ներպետական մարմինների աշխատանքի մոնիտորինգ: ՀՀ-ում այդ ոլորտի համար պատասխանատու են հիմնականում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը: Սույն ծրագրին վերաբերող գործունեության ոլորտների ու գործառույթների շրջանակներում կազմվել են նաև հարցեր, որոնք պաշտոնական նամակների ձևով ուղղվել են համապատասխան կառույցների ղեկավարներին: Պետք է նշել, որ բավականին սեղմ ժամկետներում ստացել ենք պատասխան նամակները, որտեղ մանրամասն ներկայացվում են մեր բարձրացրած հարցերի պատասխանները:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն

Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության ուղղված հարցերն էին.

1. Ինչպիսի՞ն է կենսաչափական անձնագրերի տրամադրան կարգը:
2. Արդյո՞ք ստեղծվել են կենսաչափական անձնագրերի տրամադրան շարժական կայաններ և արդյո՞ք բոլոր տարածքային բաժանմունքներում է հնարավոր կենսաչափական անձնագրերի տրամադրումը:
3. Ինչպիսի՞ն է ֆիզիկական սահմանափակ կարողություններ ունեցող մարդկանց համար կենսաչափական անձնագրերի տրամադրան կարգը:
4. Ինչպիսի՞ն է կենսաչափական անձնագրերի տրամադրման վիճակագրությունը:
5. Արդյո՞ք քաղաքացիները կարող են ստանալ հին նմուշի անձնագրեր և վավերացման կնիք:

Անձնագրի տրամադրումն օրենքով նախատեսված է 15 աշխատանքային օրում, սակայն, եթե քաղաքացիները ցանկանան կենսաչափական անձնագրեր ձեռք բերել մեկ աշխատանքային օրում, պետք է լրացուցիչ վճարեն 20 հազար դրամ, 2 աշխատանքային օրում՝ 10 հազար, 5 աշխատանքային օրում՝ 5 հազար դրամ:

Կենսաչափական անձնագրերի տրամադրան կարգի /կանոնակարգվում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով/ վերաբերյալ հարցի պատասխանից կարելի է առանձնացնել այն, որ կենսաչափական անձնագիրը պարունակում է տեխնիկական մաս՝ տվյալների պահոց, որտեղ ամրագրվում են սույն հոդվածի 2-3-րդ մասերով նախատեսված պարտադիր տվյալները, աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրոշմները: Երեխաների դեպքում մատնադրոշմները վերցվում են 6 տարեկանից, իսկ լուսանկարը փոխվում է անձնագիր տալու յուրաքանչյուր դեպքում՝ անկախ տարիքից: Լուսանկարվելն ու մատնադրոշմների հանձնելը կատարվում է ոստիկանության մարմնում, իսկ օտարերկրյա պետությունում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում: Արևելյան գործընկերության երկրների և ԵՄ միջև անօրինական միգրացիայի կանոնակարգման նպատակով ստեղծվել է մատնադրոշմների ընդհանուր համակարգ Եվրոդակ /Eurodac/, որի աշխատանքը կանոնակարգվում է Դուբլինյան կոնվենցիայով¹³:

Կարևոր խնդիր է նաև կենսաչափական անձնագրերի և նույնակալանացման քարտերի տրամադրման համար շարժական կայանների առկայությունը, ինչը շատ կարևոր է հատկապես ինքնուրույն տեղաշարժվելու ունակություն չունեցող քաղաքացիների համար, ինչպես նաև հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերի բնակիչների համար /դա ԵՄ-ի պարտադիր պահանջներից մեկն էր/: Ըստ Անձնագրային և վիզաների վարչության պետի գրավոր պատասխանի շարժական կայաններ են հատկացվել Երևան քաղաքի անձնագրային բաժանմունքին և ՀՀ մարզկենտրոններում տեղակայված անձնագրային ծառայություններին, բացի Արագածոտնի մարզից, և այժմ բանակցություններ են վարվում լեհական «PWPW» ընկերության հետ ի թիվս այլ սարքավորումների, նաև լրացուցիչ շարժական կայաններ ձեռք բերելու ուղղությամբ: Կենսաչափական անձնագրերի տրամադրումը իրականացվում է Անձնագրային և վիզաների վարչու-

¹³ <http://eapmigrationpanel.org/page18357.html>

թյունում և ենթակա բոլոր անձնագրային ծառայություններում, բացի Դավիթաշենի անձնագրային ծառայությունից: Այս նորամուծությունները քայլ առաջ են փաստաթղթերի պաշտպանվածության, անձնական տվյալների պահպանման հարցերում և համապատասխանում են ԵՄ-ի պահանջներին:

Սույն թվականի մարտի վերջի դրությամբ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում մուտքագրվել է կենսաչափական անձնագիր ստանալու ավելի քան 35 հազար դիմում, որից տպագրվել է մոտ 30 հազարը, ինչը բավականին լուրջ ցուցանիշ է նման կարճ ժամանակահատվածի համար: Չնայած նրան, որ կենսաչափական անձնագրերի տրամադրումը պարտադիր պահանջ չի հանդիսանում վիզայի տրամադրման դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերով այս փուլում, հետևաբար պարտադիր չէ, որ քաղաքացիները ունենան կենսաչափական անձնագրեր վիզայի տրամադրումը դյուրացնելու համաձայնագրից օգտվելու համար, սակայն դա պարտադիր պայման է վիզաների ազատականացման գործընթացի շարունակման համար, եթե Հայաստանը որոշում կայացնի շարունակել գործընթացը և սկսի վիզաների երկխոսությունը՝ հետագայում նպատակ ունենալով անցնել վիզաների ազատականացման փուլին:

Չնայած անձնագրերի տրման գործընթացում կատարված դրական փոփոխություններին՝ /քաղաքացիների սպասարկման բարելավում, տեխնիկական վերազինում, ավելի պաշտպանված փաստաթղթերի ներդրում և այլն, ինչը ևս շատ բարձր ենք գնահատում/ կան նաև մի շարք բացասական կողմեր.

- Կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման առաջին փուլում անձնագրային որոշ բաժանմունքներում մեծ հերթեր էին գոյացել:
- Կային դժգոհություններ անձնագրի համար կառավարության կողմից սահմանված պետական տուրքի չափի հետ կապված /հին նմուշի անձնագրերի համար այն կազմում էր 1000 դրամ, իսկ նորերի դեպքում՝ 25 հազար դրամ/: Սահմանված տուրքի մեծության չափի հետ կապված խնդիրը առավել սուր բնույթ կստանա, երբ կենսաչափական անձնագրի ստացումը դառնա պարտադիր, իսկ դա կլինի վիզայի ազատականացման երկրորդ փուլին անցման ժամանակ:
- Սկզբում նախատեսվում էր կենսաչափական անձնագրերի

համար սահմանել 5 տարի վավերականության ժամկետ, ինչը ևս դժգոհություններ է առաջացրել, այնուհետ ժամկետը դարձվեց 10 տարի, ինչն ավելի ընդունելի տարբերակ է:

- Որոշ անձնագրային բաժանմունքներում կենսաչափական անձնագրերի տրման հետ միաժամանակ հրաժարվում էին հին նմուշների անձնագրերում վավերականության ժամկետների երկարաձգում /այսպես կոչված «կլոր» կնիք/, սակայն այդ պահանջը անօրինական ճանաչվեց հենց ԱՎ վարչության պետի կողմից, ինչը մենք դրական ենք գնահատում: Այսինքն, ժամկետը չլրացած հին նմուշի անձնագրերի տերերը կարող են չփոխել անձնագրերը և անձնագրային բաժանմունքներում երկարացնել օտարերկրյա պետություններում վավերականության ժամկետը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությանն ուղղվել են հետևյալ հարցերը.

1. Կատարվում է արդյո՞ք ռեադմիսիայի համաձայնագրով նախատեսված կետերի կատարման վերաբերյալ ընդհանուր մոնիտորինգ:
2. Արդյո՞ք գործնականում արդեն կիրառվել է ռեադմիսիա /հնարավորության դեպքում ներկայացնել վիճակագրությունը/ համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո:
3. Որո՞նք են այն կոնկրետ քայլերը, որոնք Հայաստանը պարտավոր է կատարել Հայաստան վերադարձված/վերադարձած ՀՀ քաղաքացիների համար, ինչպես նաև ոչ քաղաքացիների համար:
4. Արդյո՞ք շատացել են ապաստան խնդրելու դեպքերը համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո:
5. Ո՞րն է ԵՄ-ից անօրինական միգրանտների վերադարձման ընթացակարգը:

Ռեադմիսիայի և վիզաների դյուրացման գործընթացների փոխկապակցվածությունը անչափ կարևոր է ԵՄ-ի համար, այդ պատճառով դրանք ուժի մեջ են մտել միաժամանակ: Անօրինական միգրանտների վերադարձման ընթացակարգերը սահմանվում են յուրաքանչյուր ԵՄ անդամ-երկրի ներքին օրենսդրությամբ, իսկ ռեադմիսիոն համաձայ-

նագրերը սահմանում են միայն վերադարձի միջպետական ընթացակարգերը: ԵՄ ռեադմիսիայի համաձայնագրի ուժի մեջ մտնելը ըստ միգրացիոն ծառայության դժվար թե հանգեցնի վերադարձվողների թվի էական աճի, այլ ընդամենը կկանոնակարգի վերադարձման ընթացակարգերը: Չնայած ընդունված է, որ անօրինական միգրանտների վերադարձման հետ կապված ծախսերը հոգում է ընդունող կողմը, սակայն Հայաստանի դեպքում, ըստ ռեադմիսիայի համաձայնագրի, անօրինական միգրանտների վերադարձման հետ կապված ծախսերը հոգում է ուղարկող կողմը:

Վիզաների տրամադրման դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերի իրականացման հարցերում չափազանց կարևոր է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն ծառայության դերակատարումը, որը հանդիսանում է ռեադմիսիոն համաձայնագրերի իրականացման հիմնական մարմինը: ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն ծառայությունը ներգրավված է այդ գործընթացում սկսած՝ համաձայնագրերի տեքստերի մշակման, վերջացրած դրանց իրականացման աշխատանքներում: Մինչ ԵՄ-ի հետ ռեադմիսիայի մասին համընդհանուր պայմանագրի կնքելը Հայաստանի Հանրապետությունը 2003 թվականից ի վեր կնքել է 10 համաձայնագրեր 13 պետությունների հետ, որոնցից 12 եվրոպական երկրների՝ Չեխիա, Նորվեգիա, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Նիդերլանդներ, Շվեդիա, Գերմանիա, Բուլղարիա, Շվեյցարիա, Դանիա, Լատվիա, Լիտվա /համաձայնագրերի տեքստը տե՛ս http://smsmta.am/?menu_id=15/ և մեկ՝ ԱՊՀ երկրի /Ռուսաստանի Դաշնություն/:

ՀՀ Վարչապետի 2012 թ. դեկտեմբերի 12-ի թիվ 1228-Ա որոշմամբ հաստատվել է «ՀՀ-ԵՄ հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրից բխող գործողությունների ծրագիրը, իսկ 2014 թ. մարտի 19-ին հաստատվել է ՀՀ կառավարության 300-Ն որոշումը «ՀՀ և ԵՄ միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագրի կիրառումն ապահովող միջոցառումների մասին»: Մասնավորապես, հաստատվել է նշված համաձայնագրի շրջանակում ստացվող դիմումները ՀՀ պետական մարմինների կողմից քննարկելու կարգը, համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը, համաձայնագրով ստանձնած հանձնառությունների կատարման ընթացքի մոնիթորինգն իրականացնելու և ծագող խնդիրները

քննարկելու նպատակով միգրացիոն պետական ծառայության պետի ղեկավարությամբ ստեղծվել միջգերատեսչական խումբ:

Ռեադմիսիայի համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է քննարկել Եվրամիության անդամ պետության տարածքում առանց թույլտվության բնակվող ՀՀ, երրորդ պետության քաղաքացիների հետընդունման կամ տարանցման դիմումները և սահմանված ժամկետում՝ 2 աշխատանքային օրից մինչև 12 օրացուցային օրը պատասխանել դրանց: Ըստ գործող կարգի անձը կարող է վերադարձվել առաջին մուտքի երկրից, ինչը շատ հաճախ բավականին դժվար է լինում բացահայտել:

Ռեադմիսիայի հայտը անցնում է հետևյալ ճանապարհը՝ /ՀՀ-ի կողմից վերադարձման գործընթացում ներգրավված 4 մարմիններն են՝ Միգրացիոն պետական ծառայությունը, Ազգային անվտանգության ծառայությունը, Ոստիկանությունը, Արտաքին գործերի նախարարությունը/ հայտը ստանում է միգրացիայի պետական ծառայությունը, որից հետո տեղեկացնում է ոստիկանությանը՝ ստուգելու հայտում նշված անձի ՀՀ քաղաքացի լինելու փաստը: Քաղաքացիության փաստի ճշտելուց հետո ոստիկանությունը պատասխանում է միգրացիոն ծառայությանը, որից հետո վերջինս տեղեկացնում է ԱԳՆ-ին, որպեսզի տվյալ երկրում գտնվող ՀՀ հյուպատոսական ծառայության ներկայացուցչություններին տեղյակ պահվի տվյալ քաղաքացուն վերադարձի փաստաթուղթ տրամադրելու համար, ինչպես նաև զգուշացնում է Ազգային անվտանգության ծառայությանը, որպեսզի կազմակերպվի սահմանի վրա քաղաքացու մուտքը Հայաստան: Որոշ դեպքերում ԵՄ երկրներում կարող կազմակերպվել նաև հարցազրույց ՀՀ դեսպանության ներկայացուցչի մասնակցությամբ՝ նրա ՀՀ քաղաքացիությունը պարզելու նպատակով: Սակայն վերադարձման գործընթացը բավականին բարդ /այդ թվում նաև բյուրոկրատական/ գործընթաց է, և անձի քաղաքացիությունը հաստատելուց հետո միշտ չէ, որ անձը վերադարձվում է:

Քաղաքացիների վերադարձը ավելի սահուն կազմակերպելու նպատակով ըստ միգրացիոն ծառայության տվյալների ռեադմիսիայի համաձայնագրից բացի անհրաժեշտ է բոլոր ԵՄ անդամ-երկրների հետ կնքել երկկողմանի արձանագրություն վերադարձման ընթացակարգերի վերաբերյալ:

Սույն թվականի հունվարի մեկից մինչև մայիս ընկած ժամանակահատվածում ստացվել է միայն մեկ հայց երեք անձանց մասին

(Շվեդիայից): Համեմատության համար նշենք, որ 2013 թ. ընթացքում կնքած ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում Շվեդիայի, Նորվեգիայի և Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմիններից ստացվել և համապատասխան կարգով ընթացք են տրվել 39 ռեադմիսիոն հայցեր՝ 65 անձանց մասին:

Ըստ միգրացիոն ծառայության պաշտոնական տվյալների ՀՀ միգրացիայի միայն 10 տոկոսն է դեպի ԵՄ երկրներ: Հայաստանը ԵՄ-ում ապաստան խնդրող քաղաքացիների թվով մտնում է առաջին 10-յակի մեջ, իսկ որոշ երկրներում /Բելգիա, Ֆրանսիա/՝ եռյակի մեջ:

Անհամեմատելի ցածր է իրազեկվածության մակարդակը քաղաքացիների մոտ հենց ռեադմիսիայի վերաբերյալ, բայց այդ հարցը անչափ կարևոր է: Այս հարցերի մասին թեկուզ տարրական գիտելիքները մեր քաղաքացիներին կստիպեն ևս մեկ անգամ մտածել Հայաստանից անվերադարձ հեռանալուց առաջ:

Ռեադմիսիայի համաձայնագրի համատեքստում ոչ պակաս կարևոր է վերադարձած/վերադարձված անձանց Հայաստանում վերինտեգրման հարցը: Այս առումով պետք է անդրադառնալ պետության ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից այդ ոլորտում «պարտականություններին»: Մ. թ. մարտին Միգրացիոն պետական ծառայության կողմից ՀՀ-ում Եվրոպական Միության պատվիրակության աջակցությամբ Երևանում բացված վերինտեգրման ուղղորդման կենտրոնը կարող է լինել նման պատասխանատվության դրսևորման լավ օրինակ¹⁴: «Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար» ծրագիրը ստորագրվել է Եվրամիության և ՀՀ-ի միջև «Շարժունակության շուրջ գործընկերության» շրջանակներում: Ծրագրի նպատակն է միգրացիայի կառավարման ոլորտում Հայաստանի կարողությունների հզորացումը՝ կիզակետում պահելով վերաինտեգրմանն ուղղված գործողությունները: Ծրագրին կարող են դիմել ՀՀ այն քաղաքացիները, ովքեր առնվազն 1 տարի ապրել են Եվրոպական որևէ երկրում և վերադարձից հետո առնվազն կես տարվա ընթացքում դիմել են կենտրոն աջակցություն ստանալու համար:

Նման ծրագրերը ցույց են տալիս, թե Եվրոպական միությունը որքան է կարևորում Հայաստանում միգրացիոն հոսքերի կառավարման հետագա զարգացումը: Այն ընդգծում է նաև այն մեծածավալ աջակ-

¹⁴ <http://www.azatutyun.am/content/article/24936167.html>

ցությունը, որը տրամադրվում է համապատասխան կառույցների կարողությունների հզորացմանը՝ միգրացիան կառավարելու և վերաինտեգրման գործընթացը դյուրացնելու նպատակով:

Վերադարձված անձանց վերինտեգրման նպատակով իրականացվող ծրագրերն ու տրամադրվող աջակցությունը տարբեր են. այն կարող է կրել խորհրդատվական բնույթ, կարող է տրամադրվել որոշակի գումար՝ սեփական փոքր գործ սկսելու համար, կազմակերպել մասնագիտական վերապատրաստում, երեխաների ուսուցում, բժշկական աջակցություն և այլն: Նման ծրագրերը իրականացվում են պետության, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների կողմից և չեն կրում շարունակական բնույթ, մինչդեռ անհրաժեշտ է այդ անձանց տրամադրել տևական աջակցություն: Հակառակ դեպքում դա կարող է դրդել նրանց նորից արտագաղթել:

Վերադարձված անձանց և առհասարակ հասարակության այս հարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման համար կարևոր է տեղեկատվական նյութերի տպագրումը, տարածումը, տարատեսակ տեղեկատվական միջոցառումների կազմակերպումը: Այդ իսկ նպատակով էլ այս նախագծով Ծաղկաձորում իրականացվեց սեմինար լրագրողների համար, իսկ Գյումրիում ու Երևանում՝ տեղեկատվական միջոցառումներ, որոնց նպատակն է հանրությանը ներկայացնել ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները: Այդ միջոցառումները ցույց տվեցին այդ հարցերում հանրության հետաքրքրությունը (դրա վառ ապացույցն է սույն ծրագրի շրջանակներում կազմակերպված միջոցառումների մասնակիցների թիվը) և տեղեկացվածության ցածր մակարդակը, ինչը ընգծում է նման միջոցառումների ու նախագծերի անհրաժեշտությունը՝ ընդրկելով ՀՀ տարբեր շրջաններ, հատկապես, որ դա վերաբերվում է անձանց կոլեկտիվ և անհատական իրավունքներին:

Սակայն, չնայած վերդարձվածների/վերդարձածների վերինտեինգրումը շատ կարևոր է, բայց ռեադմիսիոն համաձայնագիրը չի անդրադառնում այդ հարցերին: Դրանց որոշակի իմաստով անդրադարձ կա ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի թիվ 1593-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թթ. գործողությունների ծրագրի» 8-րդ գերակա խնդրում: Բացի այդ, սկսած 2004 թ.-ից Հայաստանում իրականացվել են ռեինտեգրացիոն տարբեր ծրագրեր: Այդ ծրագրերը Հայաստանում կյանքի են կոչվել, մասնավորապես, Միգրացիայի

պետական ծառայության, Միգրացիայի միջազգային կազմակերպության Երևանի գրասենյակի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «Մարդը կարիքի մեջ» չեխական ՀԿ-ի, Ֆրանս-հայկական հիմնադրամի և Հայկական Կարիտասի ու Շվեյցարիայի զարգացման և համագործակցության երևանյան գրասենյակի կողմից: Դրանցից Միգրացիայի միջազգային կազմակերպության ու «Մարդը կարիքի մեջ» չեխական ՀԿ-ի կողմից իրականացված ծրագրերը առանձնանում են իրենց՝ ԵՄ երկրների ընդգրկուն ցանկով: Իսկ մյուս դեպքերում ծրագրերն իրականացվել են հիմնականում մեկ երկրից վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման աջակցության մասով: Այս ծրագրերի հիմնական շահառուները կամավոր վերադարձողներն են, բացի Նիդերլանդների ՆԳ նախարարության կողմից 2010-2013 թթ. իրականացված ծրագրի, որի շահառուներ կարող էին հանդիսանալ նաև հարկադիր վերադարձվողները:

Չնայած Միգրացիոն ծառայությունը դեռ շատ անելիքներ ունի, սակայն գնահատում ենք համագործակցության պատրաստակամությունը, մանրամասն պատասխանները մեր ուղղած հարցերին: Այս ուսումնասիրության արդյունքում ակնհայտ դարձավ, որ այդ համակարգում արդեն գործում են կոնկրետ մշակված մեխանիզմներ, կա համակարգված մոտեցում և պատրաստակամություն շարունակելու ակտիվ աշխատանքը: Կարիք կա ռեադմիսիայի և միգրացիայի ոլորտներում համալիր ծրագրերի մշակման, պետության համապատասխան մարմինների կողմից իրականացվող հետևողական աշխատանքի: Սակայն այն, որ այս հարցը շարունակական հետազոտության, ուսումնասիրության կարիք ունի, դա ակնհայտ է: Մեզ նաև հետաքրքրում է այն հարցը, թե ինչու է այդքան փոքր ԵՄ-ից Հայաստան վերադարձվողների թիվը, քանի որ հայտնի է, որ ԵՄ երկրներում անօրինական բնակվող ՀՀ քաղաքացիների թիվը որոշ տվյալներով հասնում է տասնյակ հազարների: Սա թեմայի արդիականության ևս մեկ ապացույց է:

Գլուխ երրորդ

Արևելյան գործընկերության վիզաների ազատականացման համաթիվը

Արևելյան գործընկերության վիզաների ազատականացման համաթիվը («Eastern Partnership Visa Liberalisation Index») մատչելի և փոխակտիվ եղանակով ցույց է տալիս Արևելյան գործընկերության բոլոր պետությունների (Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի) կատարած առաջընթացը Եվրոպական միության հետ առանց վիզաների ճանապարհորդելու նպատակի ուղղությամբ: Կայքում զետեղված են թարմ և անկախ գնահատումների տեղեկություններ այն մասին, թե ինչպես են Արևելյան գործընկերության վեց պետությունները բավարարում վիզաների ազատականացման չափորոշիչներին: Այս յուրօրինակ գործիքն հնարավորություն է ընձեռում՝ ստուգելու և համեմատելու Արևելյան գործընկերության պետություններից յուրաքանչյուրի առաջընթացը պետական քաղաքականության համապատասխան ոլորտներում:

Վիզաների ազատականացումը Եվրոպական միության և Արևելյան գործընկերության միջև և՛ քաղաքական, և՛ տեխնիկական գործընթաց է: Հաշվի առնելով, որ վիզաների քաղաքականության նպատակն է պաշտպանվել անսահմանափակ և անցանկալի միգրացիայից, ինչպես նաև՝ անդրսահմանային կազմակերպված հանցավորությունից, վիզայազերծ ռեժիմ շնորհվում է այն պետություններին, որոնք համարվում են անվտանգ, ճիշտ կառավարվող, անվտանգությունը և հասարակական կարգն ապահովող պետություններ, այլ ոչ՝ առանց փաստաթղթերի ճանապարհորդող տնտեսական միգրանտների կամ ապաստան հայցողների ծագման վայրեր: Այսպիսով, վիզաների ազատականացման պայման է պետական քաղաքականության մի շարք ոլորտներում որոշակի չափորոշիչների բավարարումը:

Ներկայումս Արևելյան գործընկերության վեց պետություններից միայն երեքի համար են սահմանվել հստակ հենանիշներ, որոնց ապահովման դեպքում նրանց հետ կմեկնարկեն վիզայազերծ ռեժիմի շուրջ բանակցությունները Եվրամիության հետ: Մոլդովան և Ուկրաինան Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրերը ստացել են 2010 թվականին, իսկ Վրաստանը՝ 2013-ին: Մոլդովան բավարարել է Ծրագրի բոլոր չափորոշիչները, և 2014 թվականի ապրիլի 28-ից Մոլդովայի և

Եվրամիության միջև սկսել է գործել վիզայագերծ ռեժիմը: Բոլոր փաստաթղթերը շատ նման են և պարունակում են որոշակի չափորոշիչներ, որոնք խմբավորված են ըստ պետական քաղաքականության հետևյալ չորս ոլորտների. (1) փաստաթղթերի անվտանգությունը, ներառյալ՝ կենսաչափական տվյալները, (2) միգրացիան, ներառյալ՝ հետընդունումը, (3) հանրային անվտանգությունը և հասարակական կարգը, և (4) արտաքին հարաբերությունները և հիմնարար իրավունքները: Բացի դրանից, գործընթացը բաժանվել է երկու փուլերի՝ օրենսդրական փուլ և իրագործման փուլ: Եվրոպական հանձնաժողովը նախ ստուգում է օրենսդրական և կառուցակարգային համապատասխանության մակարդակը, որից հետո միայն՝ անցնում ներդրված օրենսդրական և կառուցակարգային բարեփոխումների իրագործման արդյունավետությանը:

Արևելյան գործընկերության վիզաների ազատականացման համաթվի ծրագիրը համակարգում է Ստեֆան Բատորիի հիմնադրամը՝ «Visa-free Europe Coalition» դաշինքի անդամների համագործակցությամբ:

Մեթոդաբանությունը

Համաթիվը մշակվել է մի քանի փուլերով՝ ներառելով քանակական և որակական մեթոդների համադրությունը: Գոյություն ունեցող աղբյուրներից ստացված տեղեկատվությունը համատեղվել է ազգային փորձագետների կողմից հավաքագրված էմպիրիկ տվյալների հետ:


Նախ, փորձագիտական թիմը պատրաստել է հարցաշար, որը մանրակրկիտ հարցեր է պարունակում օրենսդրական և կառուցակարգային դաշտի, ինչպես նաև՝ ընդունված օրենսդրության իրագործման մակարդակի վերաբերյալ՝ որպես հիմք ընդունելով պետական քաղաքականության այն չորս ընդհանուր ուղղությունները, որոնք թվարկված են Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրերում: Բոլոր վեց պետություններում կիրառվել են միևնույն ցուցանիշները:

Այնուհետև, հարցաշարերը լրացվում են ազգային փորձագետների կողմից և վերադարձվում են ծրագրի հիմնական թիմին: Փորձագետները տեղեկություններ հավաքելու նպատակով օգտագործում են տարաբնույթ աղբյուրներ, ներառյալ՝ համապատասխան իրավասու մարմինների պաշտոնական կայքէջերը, Եվրոպական հանձնաժողովի և համապատասխան միջազգային կազմակերպությունների զեկույցները, իրավասու պաշտոնյաների և փորձագետների հետ անհատական հարցազրույցները և այլն:

Բոլոր հարցաշարերը վերանայելուց հետո հիմնական թիմը պատրաստում է պետական քաղաքականության յուրաքանչյուր ոլորտի նկարագրու-

թյունը՝ հիմնվելով տրված պատասխանների վրա: Յուրաքանչյուր ոլորտը բաժանվում է պետական քաղաքականության մի շարք հիմնախնդիրների (տե՛ս ստորև): Հաշվի առնելով, որ ցանկալի է առավել լայն պատկերացում կազմել պետական քաղաքականության յուրաքանչյուր ոլորտի մասին, որոշվել է, որ քաղաքականության առանձին խնդիրը փորձագետները գնահատելու են 0-10 բալլի սանդղակով: Գնահատումն ավելի արժանահավաստ դարձնելու նպատակով ներդրվել են գործընկերային վերանայման երկու փուլեր: Կոնկրետ երկրի պարագայում պետական քաղաքականության յուրաքանչյուր խնդիրը գնահատվում է ազգային փորձագետի կողմից, որին զուգահեռ խնդիրը գնահատվում է մեկ այլ պետության փորձագետի կողմից: Եթե բալային գնահատականների հարցում կան տարակարծություններ, ապա փորձագետներին խնդրում են ներկայացնել հիմնավորումներ: Այնուհետև, նկարագրությունները և բալային գնահատականները լրացուցիչ ստուգման են ենթարկվում անկախ խորհրդատուների կողմից:

Ի վերջո, հիմնական թիւը փորձագետների գնահատականների և մեկնաբանությունների հիման վրա ներկայացնում է վերջնական գնահատականները: Եթե պետական քաղաքականության կոնկրետ ոլորտը ներառում է մեկից ավելի ենթաօլորտներ, ապա տվյալ ոլորտի գնահատականը դրանում ներառված բոլոր ենթաօլորտների գնահատականների միջինն է:



Վերջաբան

Փաստորեն, վիզայի տրամադրումը դյուրացնելու և ռեադմիսիայի մասին համաձայնագրերը դեռ 6 ամիս է ինչ գործում են և դեռևս շուտ է եզրակացություններ անել դրանց ազդեցության մասին: Հայաստանը հաջողությամբ հաղթահարեց ԵՄ-ի հետ առանց մուտքի վիզայի ռեժիմի (visa-free regime) անցնելու գործընթացի առաջին փուլը՝ վիզաների դյուրացումը (visa facilitation):

Այնուամենայնիվ, ելնելով միջազգային փորձից, ինչպես նաև Հայաստանի օրինակի վերլուծությունից, դժվար թե վիզաների դյուրացման գործընթացը Հայաստանում իրավիճակի որևէ բացասական կտրուկ փոփոխությունների հանգեցնի ապօրինի միգրացիայի, անվտանգության և հարակից այլ ոլորտներում:

Ամենայն հավանականությամբ, կարելի է ենթադրել, որ այժմ վիզայի տրամադրումը դյուրացնելու և ռեադմիսիայի մասին համաձայնագրերի ուժի մեջ մտնելուց հետո Հայաստան-Եվրամիություն հարաբերություններում վիզաների ոլորտում կլինի հարաբերական դադար երկու կողմերի համար: ԵՄ-ին անհրաժեշտ կլինի տեսնել, թե ինչքան՞վ են կատարվում համաձայնագրերի դրույթները, շարունակվում բարեփոխումները տարբեր որոտներում, որպեսզի քննարկի առանց մուտքի վիզայի ռեժիմի անցնելու գործընթացի 2-րդ փուլի՝ վիզային ռեժիմի վերացման մասին երկխոսության (visa dialogue) նպատակահարմարությունը, իսկ Հայաստանի կողմից քաղաքական կամք և պատրաստակամություն՝ շարունակելու երկխոսությունը վիզաների ոլորտում, ինչպես նաև խորացնելու համագործակցությունն ԵՄ - հետ՝ հաշվի առնելով ՀՀ-ի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները: Հայաստանի համար այս գործընթացը առաջին հերթին ենթադրում է օրենսդրական դաշտի շարունակական բարեփոխումներ՝ ԵՄ-ի համապատասխան չափանիշներին համապատասխանելու նպատակով: Սակայն պետք է հիշել, որ այս գործընթացը և տեխնիկական է, և քաղաքական. այսինքն՝ գործընթացի շարունակման համար անհրաժեշտ է համապատասխանել ԵՄ-ի կողմից սահմանված չափանիշներին, ինչպես նաև՝ քաղաքական որոշում:

Հայտնի է, որ քաղաքացիների շարժունությունը իր հետ բերում է նաև բազմակարծության, առողջ քննադատության աճի: Շատ կարևոր է, որ այս գործընթացին զուգահեռ Հայաստանը ակտիվ աշխատի ԵՄ երկրների հետ մեր երկրի իմիջը բարձրացնելու համար, բացատրելու համար, որ

մենք սպառնալիք չենք Եվրոպայի համար, քանի որ ԵՄ-ի պաշտոնական անձանց, ինչպես նաև հասարակ քաղաքացիների համար ավելի կարևոր է ռեադմիսիայի գործընթացը, միգրացիայի կառավարումը և անօրինական միգրացիայի մակարդակի հնարավորինս իջեցումը:

Վիզաների ազատականացման ոլորտում մեր հարևան երկրներից Մոլդովան արդեն իսկ 2014 թ. ապրիլից անցել է առանց վիզայի ռեժիմի, իսկ Ուկրաինան և Վրաստանը՝ հավանաբար 2015 թ. վերջից կամ 2016 թ. սկզբից): Նրանց հաջողությունները պետք է խթան հանդիսանան նաև Հայաստանի համար՝ շարունակել խորացնել համագործակցությունը այս ոլորտում¹⁵: Այս ոլորտում Վրաստանի առաջընթացը հատկապես կարևոր է մեզ համար, քանի որ Հայաստանի շփումը արտաքին աշխարհի հետ կատարվում է Վրաստանի տարածքով և ակնհայտ է, որ մոտ ժամանակներս Վրաստանի վիզային ռեժիմը կհամապատասխանեցվի Շենգեն գոտու վիզային ռեժիմին: Ցանկանում ենք նաև նշել Ուկրաինայում, Մոլդովայում և Վրաստանում վիզաների հետ կապված հարցերով զբաղվող մեր գործընկեր կազմակերպությունների անունները, որոնք իրենց ակտիվ գործունեության շնորհիվ մեծ ներդրում ունեցան իրենց երկրների այդ ոլորտում գրանցած հաջողություններում: Դրանք են՝ «Եվրոպան առանց խոչընդոտների» քաղաքացիական նախաձեռնությունը /Ուկրաինա/, «Հասարակական նախաձեռնությունների և զարգացման ինստիտուտը» /Մոլդովա/, «Խաղաղության, ժողովրդավարության և զարգացման Կովկասի ինստիտուտը» /Վրաստան/:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ինչպես նաև ողջ հասարակությունը ևս պետք է նպաստեն գործընթացի շարունակմանը:

Առաջարկում ենք նաև հասարակության այս հարցերում վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով իրականացնել հատուկ ծրագրեր տեղեկատվական նյութերի տպագրման, տարածման, տարատեսակ տեղեկատվական միջոցառումների կազմակերպման համար:

Առաջարկում ենք նաև շարունակել կազմակերպել պատասխանատու ներպետական մարմինների աշխատակիցների համար սեմինարներ, փորձի փոխանակման այցեր, վերապատրաստման ծրագրեր և այլն:

¹⁵ http://ec.europa.eu/dgs/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/visa-liberalisation-moldova-ukraine-and-georgia/index_en.htm

Առաջարկում ենք հետագայում հարցումներ անցկացնել հատկապես վիզայի դիմած, բայց մերժում ստացած քաղաքացիների շրջանում, քանի որ առանձին դեպքերում մերժումները լինում առանց հյուպատոսությունների կողմից հիմնավորման, բացի դրանից կարևոր է նաև քաղաքացիներին տեղեկացնել մերժման բողոքարկման մեխանիզմների մասին:

Կարևոր է, որ մեր քաղաքացիները տեղյակ լինեն, որ կա նաև վիզաների հարցերով զբաղվող Հ/Կ-ներից կազմված միջազգային կոնսորցիում: Դա Եվրոպան առանց վիզաների կոնսորցիումն է, որը վիզաների հարցերով զբաղվող Արևելյան գործընկերության անդամ-երկրների հասարակական կազմակերպությունների կոնսորցիում է¹⁶, որի անդամ է նաև Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը¹⁷: Վերոնշյալ կոնսորցիումը տարիներ շարունակ կարևոր գործունեություն է ծավալել այդ ոլորտի մոնիտորինգի, հաշվետվությունների, առաջարկների և այլ տեսակի նախաձեռնությունների ձևով:

Առաջարկում ենք հետագայում Ուկրաինայի օրինակով նախաձեռնել Հայաստանի Եվրոպական պատվիրակության հովանու ներքո կազմակերպել պարբերական հանդիպում-ժողովներ՝ ԵՄ հյուպատոսարանների և վիզաների հարցերով զբաղվող Հ/Կ-ների հետ, այսպես կոչված Շենգենյան հանդիպումներ՝ քննարկելու զարգացումները, բողոքների և վիզայի դիմողների իրավունքի խախտման դեպքերը և այլ կարևոր հարցերը: Օգտակար կլինեն նաև ԵՄ հյուպատոսների հետ պարբերական հանդիպում-հարցազրույցների կազմակերպումը, ինչպես նաև քաղաքացիների շրջանում հարցումների ու հարցազրույցների կազմակերպումը: Դա թույլ կտա կատարել իրավիճակի համակողմանի, համալիր վերլուծություն՝ վեր հանելով ոլորտի թույլ և ուժեղ կողմերը և նախաձեռնելով հնարավոր զարգացման ուղիները:

Վերջում ցանկանում ենք ևս մեկ անգամ հիշեցնել, որ սույն ծրագրի շրջանակներում կատարվել է ուսումնասիրություն ՀՀ քաղաքացիների կողմից ԵՄ մուտքի արտոնագրերի ստացման վերաբերյալ: Այդ նպատակով ուսումնասիրվել են ոլորտին վերաբերող միջազգային և ներպետական օրենսդրությունը, այդ թվում՝ Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզայի տրամադրումը դյուրացնելու և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի)

¹⁶ <http://visa-free-europe.eu/>

¹⁷ <http://acgrc.am/>

մասին համաձայնագրերը, կատարվել է նաև Հայաստանում գործող ԵՄ անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների (Գերմանիա, Լեհաստան, Ֆրանսիա, Իտալիա, Լիտվա, Հունաստան), ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիայի պետական ծառայության աշխատանքի ուսումնասիրություն: Կատարվել է նաև էլեկտրոնային մամուլի մշտադիտարկում՝ հաշվի առնելով սույն թվականի հունվարից վիզայի տրամադրումը դյուրացնելու ու ռեադմիսիայի մասին համաձայնագրերի ուժի մեջ մտնելու փաստը: Ծրագրի առաջին փուլում ուսումնասիրվել են նաև հյուպատոսական բաժինների, վերոհիշյալ ներպետական մարմինների պաշտոնական կայքերը: Այնուհետև կազմվել են հարցաշարեր՝ ուղղված համապատասխան երկրների հյուպատոսներին և ներպետական մարմիններին, որոնց պատասխանները թույլ կտան կատարել հնարավորինս ամբողջական վերլուծություն վերոհիշյալ երկու համաձայնագրերի ուժի մեջ մտնելուց հետո իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև ուսումնասիրվել է Արևելյան գործընկերության ծրագրի մյուս երկրների փորձը /Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան/:

Այս ամբողջ աշխատանքը ցույց տվեց, որ, իհարկե, կա առաջընթաց, կատարվում է մեծ ծավալի աշխատանք ԵՄ և ՀՀ-ի կողմից, սակայն միաժամանակ պետք է նշել, որ անհրաժեշտ է շարունակել ակտիվ աշխատանքը այդ ուղղությամբ, խորացնել համագործակցությունը այդ ոլորտում: Հյուպատոսարանների աշխատանքի առավել խոր և համապարփակ համեմատական վերլուծություն կատարելու համար հետագայում անհրաժեշտ կլինի բացի հյուպատոսություններից ստացված պատասխաններից ու դրանց պաշտոնական կայքերում տեղակայված տեղեկություններից, կատարել նաև վիզայի դիմողների հարցումներ՝ ընդգրկելով վիզա ստացած և մերժված անձանց:

Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզայի տրամադրումը դյուրացնելու և առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրերը և դրանց լիարժեք կիրառումը նոր նյութ են տալիս մեր ուսումնասիրությունը շարունակելու համար:

ՀՂՈՒՄՆԵՐ

- ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ <http://www.mfa.am/hy/>
- ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն՝ <http://smsmta.am/>
- Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն՝ <http://www.passportvisa.am/>
- Հայաստանում Գերմանիայի դեսպանություն՝ <http://www.eriwan.diplo.de/>
- Հայաստանում Իտալիայի դեսպանություն՝ http://www.ambjerevan.esteri.it/Ambasciata_Jerevan
- Հայաստանում Ֆրանսիայի դեսպանություն՝ <http://www.ambafrance-am.org/>
- Հայաստանում Լիտվայի դեսպանություն՝ <http://am.mfa.lt/>
- Հայաստանում Լեհաստանի դեսպանություն՝ <http://erywan.msz.gov.pl/en/>
- Հայաստանում Հունաստանի դեսպանություն՝ <http://www.greekembassy.am/>
- Եվրոպական Միություն՝ http://europa.eu/index_en.htm
- Արևելյան գործընկերություն՝ http://eeas.europa.eu/eastern/index_en.htm
- Միգրացիայի և ապաստանի հարցերով կոմիտե՝ <http://eapmigrationpanel.org/page19891.html>
- Եվրոպան առանց սահմանների կոնսուրցիում՝ <http://visa-free-europe.eu/>
- Բաց հասարակության ինստիտուտներ- հիմնադրամ՝ <http://www.osf.am/?lang=am>
- Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն՝ <http://arm.acgrc.am/>

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ, այսուհետ՝ Միություն,
և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, այսուհետ՝
Հայաստան, այսուհետ՝ Կողմեր,

ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՎ դյուրացնելու միջմարդկային շփումները՝ որպես տնտեսական, հումանիտար, մշակութային, գիտական և այլ կապերի կայուն զարգացման կարևոր նախապայման, դյուրացնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին վիզաների տրամադրումը,

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը, որով գործընկերություն է հաստատվում մի կողմից՝ Միության և նրա անդամ պետությունների, մյուս կողմից՝ Հայաստանի միջև, ինչպես նաև ԵՄ - Հայաստան Ասոցիացման համաձայնագիր կնքելու Կողմերի մտադրությունը,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ Պրահայում և Վարշավայում, համապատասխանաբար, 2009 թվական մայիսի 7-ին և 2011 թվականի սեպտեմբերի 30-ին կայացած՝ Արևելյան գործընկերության գագաթնաժողովների համատեղ հռչակագրերը, որոնցով քաղաքական աջակցություն է հայտնվում վիզային ռեժիմի ազատականացմանը անվտանգ միջավայրում,

ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՎ իրենց քաղաքացիների համար համապատասխան ժամկետներում առանց վիզայի ճամփորդական ռեժիմ սահմանելու ուղղությամբ աստիճանական քայլեր ձեռնարկելու մտադրությունը՝ պայմանով, որ առկա լինեն լավ կառավարվող և անվտանգ շարժունակության համար նախադրյալներ,

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ 2013 թվականի հունվարի 10-ից Միության բոլոր քաղաքացիներն ազատվում են վիզայի պահանջից՝ 90 օրը չզերազանցող ժամանակահատվածով դեպի Հայաստան ճամփորդելիս կամ Հայաստանի տարածքով տարանցելիս,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, որ եթե Հայաստանը վերականգնի վիզայի պահանջները Միության քաղաքացիների կամ նրանց որոշ կատեգորիաների համար, ապա սույն Համաձայնագրով Հայաստանի քաղաքացիներին շնորհված նույն դյուրացումները ինքնաբերաբար, փոխադարձության սկզբունքի հիման վրա կկիրառվեն Միության համապատասխան քաղաքացիների նկատմամբ,

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ վիզայի այս պահանջները կարող են վերականգնվել միայն Միության բոլոր քաղաքացիների կամ Միության որոշ քաղաքացիների կատեգորիաների համար,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, որ վիզայի տրամադրումը դյուրացնելը չպետք է հանգեցնի անկանոն միգրացիայի, և հատուկ ուշադրություն դարձնելով անվտանգությանը և հետընդունմանը,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ազատության, անվտանգության և արդարության ոլորտում Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դիրքորոշման վերաբերյալ արձանագրությունը և Եվրոպական միության շրջանակում ներառված Շենգենյան կանոնագրքի [acquis] վերաբերյալ արձանագրությունը, որոնք ներկայացված են «Եվրոպական միության մասին» պայմանագրին և «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրին կից, և հաստատելով, որ սույն Համաձայնագրի դրույթները չեն կիրառվում Միացյալ Թագավորության և Իռլանդիայի նկատմամբ,

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ Դանիայի դիրքորոշման վերաբերյալ արձանագրությունը, որը ներկայացված է «Եվրոպական միության մասին» պայմանագրին և «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրին կից, և հաստատելով, որ սույն Համաձայնագրի դրույթները չեն կիրառվում Դանիայի Թագավորության նկատմամբ,

ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.

Հոդված 1

Նպատակը և կիրառման շրջանակը

1. Սույն Համաձայնագրի նպատակն է դյուրացնել վիզաների տրամադրումը Հայաստանի քաղաքացիներին 180 օրվա յուրաքանչյուր ժամանակա-

հատվածի ընթացքում 90 օրվանից ոչ ավել ժամանակահատվածով՝ որոշակի նպատակով գտնվելու համար:

2. Եթե Հայաստանը վերականգնի վիզայի պահանջները Միության քաղաքացիների կամ նրանց որոշ կատեգորիաների համար, ապա այն նույն դյուրացումները, որոնք սույն Համաձայնագրով շնորհվել են Հայաստանի քաղաքացիներին, ինքնաբերաբար, փոխադարձության սկզբունքի հիման վրա կկիրառվեն Միության համապատասխան քաղաքացիների նկատմամբ:

Հոդված 2

Ընդհանուր դրույթը

1. Սույն Համաձայնագրով նախատեսված՝ վիզայի տրամադրման դյուրացումները Հայաստանի քաղաքացիների համար կիրառվում են այնքանով, որքանով Միության կամ անդամ պետությունների օրենքներով և կանոնակարգերով, սույն Համաձայնագրով կամ այլ միջազգային համաձայնագրերով նրանք ազատված չեն վիզայի պահանջից:

2. Հայաստանի կամ անդամ պետությունների ազգային իրավունքը կամ Միության իրավունքը կիրառվում է սույն Համաձայնագրով չկարգավորվող հարցերի նկատմամբ, ինչպիսիք են՝ վիզայի տրամադրումը մերժելը, ճամփորդական փաստաթղթերի ճանաչումը, ապրուստի բավարար միջոցների վերաբերյալ ապացույցները, մուտքի մերժումը և վտարման միջոցները:

Հոդված 3

Սահմանումները

Սույն Համաձայնագրի իմաստով՝

- ա) «անդամ պետություն» նշանակում է՝ Միության ցանկացած անդամ պետություն՝ բացառությամբ Դանիայի Թագավորության, Իռլանդիայի Հանրապետության և Միացյալ Թագավորության.
- բ) «Միության քաղաքացի» նշանակում է՝ անդամ պետության քաղաքացի, ինչպես սահմանված է «ա» կետում.
- գ) «Հայաստանի քաղաքացի» նշանակում է՝ ցանկացած անձ, ով ունի Հայաստանի քաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.
- դ) «վիզա» նշանակում է՝ անդամ պետության կողմից տրված թույլտվու-

թյուն անդամ պետությունների տարածքով տարանցելու կամ անդամ պետությունների տարածքում որոշակի նպատակով գտնվելու համար ոչ ավել, քան 90 օր յուրաքանչյուր 180 օր ժամանակահատվածում.

- ե) «օրինական բնակվող անձ» նշանակում է՝ Հայաստանի քաղաքացի, ում թույլատրվել կամ իրավունք է տրվել 90 օրից ավել գտնվել անդամ պետության տարածքում՝ Միության իրավունքի կամ ազգային օրենսդրության հիման վրա:

Հոդված 4

Ճամփորդության նպատակի վերաբերյալ փաստաթղթային հիմնավորումը

1. Հայաստանի քաղաքացիների հետևյալ կատեգորիաների համար հետևյալ փաստաթղթերը բավարար են՝ հիմնավորելու համար ճամփորդության նպատակը դեպի մյուս Կողմ.

- ա) մերձավոր ազգականների համար՝ ամուսին, երեխաներ (ներառյալ որդեգրվածները), ծնողներ (ներառյալ խնամակալները), տատիկներ, պապիկներ, թոռներ, ովքեր այցելում են անդամ պետությունների տարածքում օրինական կերպով բնակվող Հայաստանի քաղաքացիներին կամ Եվրոպական միության քաղաքացիներին, ովքեր բնակվում են այն անդամ պետության տարածքում, որի քաղաքացիներն են.

- գրավոր դիմում հյուրընկալող անձի կողմից,

- բ) պաշտոնական պատվիրակության անդամների՝ ներառյալ այնպիսի պատվիրակությունների մշտական անդամների համար, որոնք Հայաստանին ուղղված պաշտոնական հրավերի հիման վրա մասնակցում են հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին կամ փոխանակման ծրագրերին, ինչպես նաև միջկառավարական կազմակերպությունների կողմից անդամ պետությունների տարածքներում կազմակերպվող միջոցառումներին.

- Հայաստանի իրավասու մարմնի կողմից տրված նամակը, որով հաստատվում է, որ դիմողը վերը նշված միջոցառումներին մասնակցելու նպատակով մյուս Կողմի տարածք ուղևորվող իր պատվիրակության անդամ է, համապատասխանաբար, իր պատվիրակության մշտական անդամ է, որին կից ներկայացվում է պաշտոնական հրավերի պատճենը,

- զ) դպրոցականների, ուսանողների, հետբուհական ուսուցում ստացող անձանց և ուղեկցող ուսուցիչների համար, ովքեր ճամփորդում են ուսման կամ կրթական վերապատրաստման նպատակով, ներառյալ՝ փոխանակման ծրագրերի, ինչպես նաև դպրոցի հետ կապված գործունեության այլ ոլորտների շրջանակում.
- հյուրընկալող համալսարանի, քոլեջի կամ դպրոցի կողմից գրավոր դիմում, կամ ընդունման մասին վկայական, կամ ուսանողական քարտեր, կամ այն դասընթացների մասին վկայականներ, որոնց պետք է հաճախեն,
- դ) բուժման նպատակներով ճամփորդող և անհրաժեշտ՝ ուղեկցող անձանց համար.
- բուժիմանարկի պաշտոնական փաստաթուղթ, որով հաստատվում է տվյալ հիմնարկում բուժօգնություն ստանալու անհրաժեշտությունը, ուղեկցման անհրաժեշտությունը և բուժման վճարումների համար բավարար ֆինանսական միջոցների մասին ապացույց,
- ե) լրագրողների և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող տեխնիկական անձնակազմի համար.
- մասնագիտական կազմակերպության կամ դիմողի գործատուի կողմից տրված վկայական կամ այլ փաստաթուղթ, որն ապացուցում է, որ տվյալ անձը որակավորված լրագրող է, և որում նշվում է, որ ճամփորդության նպատակն է լրագրողական աշխատանքի իրականացումը, կամ ապացուցվում է, որ նա այն տեխնիկական անձնակազմի անդամ է, որն ուղեկցում է լրագրողին մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում,
- զ) միջազգային սպորտային միջոցառումների մասնակիցների և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող անձանց համար.
- հյուրընկալող կազմակերպության, իրավասու մարմինների, անդամ պետությունների ազգային սպորտային ֆեդերացիաների կամ ազգային օլիմպիական կոմիտեների կողմից գրավոր դիմում,
- է) գործարարների և բիզնես կազմակերպությունների ներկայացուցիչների համար.
- հյուրընկալող իրավաբանական անձի կամ ընկերության, կազմա-

կերպության կամ այդպիսի իրավաբանական անձի կամ ընկերության գրասենյակի կամ մասնաճյուղի, անդամ պետությունների պետական և տեղական իշխանության մարմինների, կազմակերպող կոմիտեների կամ անդամ պետությունների տարածքում անցկացվող առևտրային և արդյունաբերական ցուցահանդեսների, խորհրդաժողովների և գիտաժողովների կողմից տրված գրավոր դիմում, որը հաստատված է իրավասու մարմինների կողմից՝ ազգային օրենսդրությանը համապատասխան,

ը) անդամ պետությունների տարածքներում միջազգային ցուցահանդեսներին, խորհրդաժողովներին, գիտաժողովներին, սեմինարներին կամ այլ նմանատիպ միջոցառումներին մասնակցող մասնագետների համար.

- հյուրընկալող կազմակերպության կողմից գրավոր դիմում, որը հաստատում է, որ տվյալ անձը մասնակցում է այդ միջոցառմանը,

թ) քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և անդամ պետություններում գրանցված հայկական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հրավիրված անձանց համար, որոնք ճամփորդություն են ձեռնարկում կրթական վերապատրաստումներին, սեմինարներին, խորհրդաժողովներին՝ ներառյալ փոխանակման ծրագրերի կամ համահայկական և համայնքային աջակցության ծրագրերի շրջանակներում մասնակցելու նպատակով.

- հյուրընկալող կազմակերպության կողմից տրված գրավոր դիմում, հաստատում, որ այդ անձը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ է կամ մասնակցում է համահայկական կամ համայնքային աջակցության ծրագրերին, և համապատասխան գրանցամատյանից վկայական նման կազմակերպության հիմնադրման մասին, որը տրվում է պետական իշխանության մարմնի կողմից՝ ազգային օրենսդրությանը համապատասխան,

ժ) գիտական, ակադեմիական, մշակութային և գեղարվեստական աշխատանքներին մասնակցող անձանց համար՝ ներառյալ համալսարանական և այլ փոխանակման ծրագրերը.

- գրավոր դիմում հյուրընկալող կազմակերպության կողմից այդ աշխատանքներին մասնակցելու համար,

ժա) Հայաստանում գրանցված տրանսպորտային միջոցների վարորդների համար, ովքեր իրականացնում են միջազգային բեռնափոխադրումների և ուղևորների փոխադրման ծառայություններ դեպի անդամ պետությունների տարածքներ.

- միջազգային ճանապարհային փոխադրումներ իրականացնող փոխադրողների Հայաստանի ազգային ասոցիացիայի (միություն) կողմից գրավոր դիմում, որում նշվում է ճամփորդությունների նպատակը, երթուղին, տևողությունը և հաճախականությունը,

ժբ) քույր քաղաքների և այլ քաղաքային մարմինների կողմից կազմակերպված պաշտոնական փոխանակման ծրագրերի մասնակիցների համար.

- այդ քաղաքների վարչակազմի ղեկավարի (քաղաքապետի) կամ քաղաքային իշխանությունների կողմից տրված գրավոր դիմում,

ժգ) զինվորական և քաղաքացիական հուղարկավորության մասնակիցների համար.

- պաշտոնական փաստաթուղթ, որը կհաստատի գերեզմանի գոյությունը կամ պահպանումը, ինչպես նաև ազգակցական կամ այլ կապերը դիմողի և հանգուցյալի միջև:

2. Մույն հոդվածի նպատակներով՝ գրավոր դիմումը ներառում է հետևյալ տեղեկատվությունը.

ա) հրավիրված անձի համար՝ անունը և ազգանունը, ծննդյան տարեթիվը, սեռը, քաղաքացիությունը, անձնագրի համարը, ճամփորդության ժամկետը և նպատակը, մուտքերի թիվը և, եթե կիրառելի է, ամուսնու ու երեխաների անունները, ովքեր ուղեկցում են հրավիրված անձին,

բ) հրավիրող անձի համար՝ անունը, ազգանունը և հասցեն,

գ) հրավիրող իրավաբանական անձի, ընկերության կամ կազմակերպության համար՝ լրիվ անվանումը, հասցեն և

- եթե դիմումը տրվել է կազմակերպության կամ իշխանության մարմնի կողմից, դիմումը ստորագրող անձի անունը և պաշտոնը,

- եթե հրավիրողը իրավաբանական անձ կամ ընկերություն կամ

նման իրավաբանական անձի կամ ընկերության գրասենյակ կամ մասնաճյուղ է՝ հիմնադրված անդամ պետության տարածքում՝ գրանցման համարը, ինչպես պահանջվում է տվյալ անդամ պետության ազգային իրավունքով:

3. Սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված անձանց կատեգորիաների համար վիզաների բոլոր կատեգորիաները տրվում են պարզեցված կարգով՝ առանց պահանջելու ճամփորդության նպատակի հետ կապված որևէ այլ հիմնավորում, հրավեր կամ վավերացում, որը նախատեսված է Կողմերի օրենսդրությամբ:

Հոդված 5

Բազմակի մուտքի վիզաների տրամադրումը

1. Անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունները և հյուպատոսական հիմնարկները մինչև 5 տարվա վավերականությամբ բազմակի մուտքի վիզաներ են տրամադրում քաղաքացիների հետևյալ կատեգորիաներին.

- ա) անդամ պետությունների տարածքներում օրինական կերպով բնակվող Հայաստանի քաղաքացիներին կամ Եվրոպական միության քաղաքացիներին, ովքեր բնակվում են այն անդամ պետության տարածքում, որի քաղաքացիներն են, այցելող ամուսիններին, երեխաներին (ներառյալ որդեգրվածները), որոնց 21 տարին չի լրացել կամ գտնվում են խնամքի տակ, և ծնողներին (ներառյալ խնամակալները),
- բ) ազգային և տարածաշրջանային կառավարությունների և սահմանադրական ու գերագույն դատարանների անդամներին, ովքեր սույն Համաձայնագրով ազատված չեն վիզայի պահանջից՝ իրենց պարտականությունները կատարելիս,
- գ) պաշտոնական պատվիրակությունների մշտական անդամներին, որոնք Հայաստանին ուղղված պաշտոնական հրավերների հիման վրա, կանոնավոր կերպով պետք է մասնակցեն հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին կամ փոխանակման ծրագրերին, ինչպես նաև անդամ պետությունների տարածքներում անցկացվող միջկառավարական կազմակերպությունների կողմից կազմակերպված միջոցառումներին:

Շեղում կատարելով՝ այն դեպքերում, երբ հաճախակի կամ պարբերաբար ճամփորդելու անհրաժեշտությունը կամ մտադրությունն ակնհայտորեն սահմանափակվում է ավելի կարճ ժամանակահատվածով, բազմակի մուտքի վիզայի վավերականության ժամկետը սահմանափակվում է այդ ժամանակահատվածով, մասնավորապես, եթե.

- «ա» կետում նշված անձանց դեպքում՝ Եվրոպական միությունում օրինական կերպով բնակվող Հայաստանի քաղաքացիների օրինական բնակվելու թույլտվության վավերականության ժամանակահատվածը,
- «բ» կետում նշված անձանց դեպքում՝ պաշտոնավարման ժամկետը,
- «գ» կետում նշված անձանց դեպքում՝ պաշտոնական պատվիրակության մշտական անդամի կարգավիճակի վավերականության ժամկետը հինգ տարուց պակաս է:

2. Անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունները և հյուպատոսական հիմնարկները մինչև մեկ տարվա վավերականությամբ բազմակի մուտքի վիզաներ են տրամադրում հետևյալ անձանց կատեգորիաներին՝ պայմանով, որ նախորդ տարվա ընթացքում նրանք ստացել են նվազագույնը մեկ վիզա և օգտվել դրանից՝ այցելած անդամ պետության մուտքի և գտնվելու վերաբերյալ օրենքներին համապատասխան.

- ա) պաշտոնական պատվիրակությունների անդամներին, որոնք Հայաստանին հասցեագրված պաշտոնական հրավերի հիման վրա, կանոնավոր կերպով մասնակցում են հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին կամ փոխանակման ծրագրերին, ինչպես նաև անդամ պետությունների տարածքներում անցկացվող միջկառավարական կազմակերպությունների կողմից կազմակերպված միջոցառումներին,
- բ) քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և անդամ պետություններում գրանցված հայկական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հրավիրված անձանց, որոնք կանոնավոր կերպով ճամփորդություն են ձեռնարկում անդամ պետություններ՝ կրթական վերապատրաստումներին, սեմինարներին, խորհրդածոյակներին՝ ներառյալ փոխանակման ծրագրերի կամ համահայկական և համայնքային աջակցության ծրագրերի շրջանակներում մասնակցելու նպատակով,

- զ) միջազգային ցուցահանդեսներին, խորհրդատուներին, գիտաժողովներին, սեմինարների կամ այլ նմանատիպ միջոցառումների մասնակցող մասնագետներին, ովքեր կանոնավոր կերպով ճամփորդում են անդամ պետություններ,
- դ) գիտական, մշակութային և գեղարվեստական աշխատանքներին մասնակցող անձանց՝ ներառյալ համալսարանական և այլ փոխանակման ծրագրերը, ովքեր կանոնավոր կերպով ճամփորդում են անդամ պետություններ,
- ե) ուսանողներին և հետբուհական ուսուցում ստացող անձանց, ովքեր կանոնավոր կերպով ճամփորդում են ուսման կամ կրթական վերապատրաստման նպատակով, ներառյալ՝ փոխանակման ծրագրերի շրջանակում,
- զ) քույր քաղաքների կամ այլ քաղաքային մարմինների կողմից կազմակերպված պաշտոնական փոխանակման ծրագրերի մասնակիցներին,
- է) բուժական նպատակներով կանոնավոր այցելությունների կարիք ունեցող անձանց և անհրաժեշտ ուղեկցող անձանց,
- ը) լրագրողներին և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող տեխնիկական անձնակազմին,
- թ) գործարարներին և բիզնես կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք կանոնավոր կերպով ճամփորդում են անդամ պետություններ,
- ժ) միջազգային սպորտային միջոցառումների մասնակիցներին և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող անձանց,
- ժա) Հայաստանում գրանցված տրանսպորտային միջոցների վարորդներին, ովքեր իրականացնում են միջազգային բեռնափոխադրումների և ուղևորների փոխադրման ծառայություններ դեպի անդամ պետությունների տարածքներ:

Շեղում կատարելով առաջին նախադասությունից՝ եթե հաճախակի կամ կանոնավոր ճամփորդելու անհրաժեշտությունը կամ մտադրու-

թյունն ակնհայտորեն սահմանափակվում է ավելի կարճ ժամանակահատվածով, ապա բազմակի մուտքի վիզայի վավերականության ժամկետը սահմանափակվում է այդ ժամանակահատվածով:

3. Անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունները և հյուպատոսական հիմնարկները առնվազն 2 տարվա և առավելագույնը 5 տարվա վավերականությամբ բազմակի վիզաներ են տրամադրում սույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ նշված քաղաքացիների կատեգորիաներին՝ պայմանով, որ նախորդ 2 տարվա ընթացքում նրանք օգտվել են մեկ տարվա բազմակի մուտքի վիզաներից՝ այցելած անդամ պետության՝ մուտքի և գտնվելու վերաբերյալ օրենքներին համապատասխան, եթե հաճախակի կամ կանոնավոր կերպով ճամփորդելու անհրաժեշտությունը կամ մտադրությունն ակնհայտ կերպով չի սահմանափակվում ավելի կարճ ժամանակահատվածով. այդ դեպքում բազմակի մուտքի վիզաների վավերականության ժամկետը սահմանափակվում է այդ ժամանակահատվածով:

4. Սույն հոդվածի 1-3-րդ պարբերություններում նշված անձանց՝ անդամ պետությունների տարածքներում գտնվելու ընդհանուր ժամանակահատվածը չի գերազանցում 90 օրը յուրաքանչյուր 180 օր ժամանակահատվածի ընթացքում:

Հոդված 6

Վիզայի դիմումների հետ կապված ձևակերպումների համար վճարները

1. Վիզայի դիմումների հետ կապված ձևակերպումների համար վճարը կազմում է 35 եվրո:

Նշված գումարը կարող է վերանայվել 14-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված ընթացակարգին համապատասխան:

2. Չխախտելով 3-րդ պարբերության դրույթները՝ վիզայի դիմումների հետ կապված ձևակերպումների համար վճարներից ազատվում են հետևյալ անձանց կատեգորիաները.

- ա) թոշակառուները,
- բ) 12 տարեկանից ցածր տարիք ունեցող երեխաները,
- գ) ազգային ու տարածաշրջանային կառավարությունների և սահմանադրական ու գերագույն դատարանների անդամները, եթե նրանք սույն Համաձայնագրով ազատված չեն վիզայի պահանջից,

- դ) հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ուղեկցող անձինք՝ ըստ անհրաժեշտության,
- ե) անդամ պետությունների տարածքներում օրինական կերպով բնակվող Հայաստանի քաղաքացիներին կամ Եվրոպական միության քաղաքացիներին, ովքեր բնակվում են այն անդամ պետության տարածքում, որի քաղաքացիներն են, այցելող մերձավոր ազգականները՝ ամուսինը, երեխաները (ներառյալ որդեգրվածները), ծնողները (ներառյալ խնամակալները), տատիկները, պապիկները, թոռները,
- զ) պաշտոնական պատվիրակության անդամները՝ ներառյալ պաշտոնական պատվիրակությունների մշտական անդամները, ովքեր Հայաստանին հասցեագրված պաշտոնական հրավերի հիման վրա մասնակցում են հանդիպումներին, խորհրդակցություններին, բանակցություններին կամ փոխանակման ծրագրերին, ինչպես նաև միջկառավարական կազմակերպությունների կողմից անդամ պետությունների տարածքներում կազմակերպվող միջոցառումներին,
- է) դպրոցականները, ուսանողները, հետբուհական ուսուցում ստացող անձինք և ուղեկցող ուսուցիչները, ովքեր ճամփորդություն են ձեռնարկում ուսման կամ կրթական վերապատրաստման նպատակով, ներառյալ՝ փոխանակման ծրագրերի, ինչպես նաև դպրոցի հետ կապված գործունեության այլ ոլորտների շրջանակում,
- ը) լրագրողները և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող տեխնիկական անձնակազմը,
- թ) միջազգային սպորտային միջոցառումների մասնակիցները և մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում նրանց ուղեկցող անձինք,
- ժ) քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և անդամ պետություններում գրանցված հայկական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հրավիրված անձինք, որոնք ճամփորդություն են ձեռնարկում կրթական վերապատրաստումներին, սեմինարներին, խորհրդաժողովներին՝ ներառյալ փոխանակման ծրագրերի կամ համահայկական և համայնքային աջակցության ծրագրերի շրջանակներում մասնակցելու նպատակով,
- ժա) գիտական, ակադեմիական, մշակութային և գեղարվեստական աշ-

խատանքներին մասնակցող անձինք՝ ներառյալ համալսարանական և այլ փոխանակման ծրագրերը,

ժբ) այն անձինք, ովքեր ներկայացրել են մարդասիրական նկատառումներով, ներառյալ՝ շտապ բժշկական օգնություն ստանալու համար, իրենց ճամփորդության անհրաժեշտությունը հիմնավորող փաստաթղթեր, և նման անձին ուղեկցող անձը, կամ մերձավոր ազգականի հուղարկավորությանը մասնակցելու կամ ծանր հիվանդ մերձավոր ազգականին այցելելու համար:

3. Եթե անդամ պետությունը վիզայի տրամադրման համար համագործակցում է արտաքին ծառայություն մատուցողի հետ, ապա արտաքին ծառայություն մատուցողը կարող է ծառայության դիմաց վճար գանձել: Այս վճարը պետք է համաչափ լինի արտաքին ծառայություն մատուցողի՝ իր գործառնություններն իրականացնելու ընթացքում կատարած ծախսերին և չպետք է գերազանցի 30 եվրոն: Անդամ պետությունները բոլոր դիմողներին հնարավորություն են ընձեռում իրենց դիմումները անմիջականորեն հանձնելու իրենց հյուպատոսարաններին:

Միության համար արտաքին ծառայություն մատուցողն իր գործողություններն իրականացնում է Վիզայի օրենսգրքին համապատասխան և լիարժեք կերպով պահպանելով Հայաստանի օրենսդրությունը:

Հոդված 7

Վիզայի դիմումների հետ կապված ձևակերպումներին առնչվող ընթացակարգերի տևողությունը

1. Անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունները և հյուպատոսական հիմնարկները վիզայի տրամադրման դիմումի վերաբերյալ որոշում ընդունում են վիզայի տրամադրման համար պահանջվող դիմումի և փաստաթղթերի ստացման ամսաթվից հետո 10 օրացուցային օրվա ընթացքում:

2. Առանձին դեպքերում վիզայի դիմումի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օրացուցային օր, հատկապես երբ դիմումը լրացուցիչ ուսումնասիրման կարիք ունի:

3. Հրատապ դեպքերում վիզայի դիմումի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը կարող է կրճատվել մինչև երկու աշխատանքային օր կամ ավելի պակաս:

4. Եթե դիմում հանձնելու համար դիմողներից պահանջվում է հարցազրույց անցնել, ապա հարցազրույցը, որպես կանոն, նշանակվում է հարցազրույցի համար դիմելու ամսաթվից հետո երկու շաբաթվա ընթացքում: Հիմնավորված հրատապ դեպքերում հյուպատոսարանը կարող է դիմողներին թույլ տալ իրենց դիմումները ներկայացնել առանց հարցազրույց անցնելու, կամ հարցազրույցը կարող է լինել անմիջապես:

Հոդված 8

Մեկնումը կորած կամ գողացված փաստաթղթերի դեպքում

Միության և Հայաստանի քաղաքացիները, ովքեր Հայաստանի կամ անդամ պետությունների տարածքներում գտնվելու ընթացքում կորցրել են իրենց անձը հաստատող փաստաթղթերը, կամ ումից այդ փաստաթղթերը գողացվել են, կարող են դուրս գալ Հայաստանի կամ անդամ պետության տարածքից անդամ պետությունների կամ Հայաստանի դիվանագիտական առաքելությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից տրված՝ անձը հաստատող՝ սահմանը հատելու իրավունք տվող վավեր փաստաթղթերի հիման վրա՝ առանց որևէ վիզայի կամ այլ թույլտվության:

Հոդված 9

Վիզայի ժամկետի երկարաձգումը բացառիկ հանգամանքներում

Հայաստանի այն քաղաքացիների համար, ովքեր ֆորսմաժորային կամ մարդասիրական պատճառներով իրենց վիզայում նշված ժամկետում չեն կարող դուրս գալ անդամ պետությունների տարածքից, վիզաների ժամկետները անվճար երկարաձգվում են ընդունող անդամ պետությունում կիրառվող օրենսդրությանը համապատասխան՝ իրենց բնակության պետություն վերադառնալու համար պահանջվող ժամանակահատվածով:

Հոդված 10

Դիվանագիտական անձնագրերը

1. Հայաստանի այն քաղաքացիները, ովքեր ունեն վավեր դիվանագիտական անձնագրեր, կարող են մուտք գործել, դուրս գալ և տարանցել անդամ պետությունների տարածքներով՝ առանց վիզաների:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված անձինք անդամ

պետությունների տարածքներում կարող են մնալ 90 օրվանից ոչ ավել ժամկետով յուրաքանչյուր 180 օր ժամանակահատվածի ընթացքում:

Հոդված 11

Վիզաների տարածքային վավերությունը

Պահպանելով ազգային անվտանգության վերաբերյալ անդամ պետությունների ազգային կանոններն ու կանոնակարգերը և Տարածքային սահմանափակ վավերությամբ վիզաների մասին ԵՄ կանոնները՝ Հայաստանի քաղաքացիներն իրավունք ունեն ճամփորդելու անդամ պետությունների տարածքներով Եվրոպական միության քաղաքացիների հետ հավասար հիմունքներով:

Հոդված 12

Համաձայնագրի կառավարման համար համատեղ կոմիտեն

1. Կողմերն ստեղծում են փորձագետների համատեղ կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե)՝ կազմված Միության և Հայաստանի ներկայացուցիչներից: Միությանը ներկայացնում է Հանձնաժողովը, որին աջակցում են անդամ պետությունների փորձագետները:

2. Կոմիտեն ունի մասնավորապես հետևյալ խնդիրները.

- ա) սույն Համաձայնագրի իրականացման դիտանցում,
- բ) սույն Համաձայնագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկների ներկայացում,
- գ) սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերի կարգավորում:

3. Կոմիտեն հանդիպում է ըստ անհրաժեշտության՝ Կողմերից մեկի պահանջով և առնվազն տարին մեկ անգամ:

4. Կոմիտեն ընդունում է իր աշխատակարգը:

Հոդված 13

Սույն Համաձայնագրի առնչությունը անդամ պետությունների և Հայաստանի միջև երկկողմ համաձայնագրերին

Ուժի մեջ մտնելուց հետո սույն Համաձայնագիրը գերակայում է առանձին անդամ պետության և Հայաստանի միջև կնքված ցանկացած երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրի կամ պայմանավորվածության դրույթների՝ այնքանով, որքանով նշված համաձայնագրերի կամ պայմա-

նավորվածությունների դրույթները կարգավորում են սույն Համաձայնագրով կարգավորվող հարցերը:

Հոդված 14

Եզրափակիչ դրույթները

1. Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման կամ հաստատման Կողմերի կողմից՝ իրենց համապատասխան ընթացակարգերին համապատասխան, և ուժի մեջ է մտնում այն ամսաթվին հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը, երբ Կողմերը միմյանց ծանուցում են, որը վերը նշված ընթացակարգերը կատարվել են:

2. Շեղում կատարելով սույն Համաձայնագրի 1-ին պարբերությունից՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության և Հայաստանի միջև հետընդունման մասին համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվին, եթե այդ ամսաթիվը սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված ամսաթվից հետո է:

3. Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով, քանի դեռ չի դադարեցվել սույն հոդվածի 6-րդ պարբերությանը համապատասխան:

4. Կողմերի գրավոր համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում այն բանից հետո, երբ Կողմերը միմյանց ծանուցում են այդ նպատակով անհրաժեշտ ներքին ընթացակարգերը կատարելու մասին:

5. Յուրաքանչյուր Կողմ կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ ելնելով հանրային կարգի, ազգային անվտանգության կամ հանրային առողջության պաշտպանության նկատառումներից: Կասեցման վերաբերյալ որոշման մասին մյուս Կողմը ծանուցվում է ոչ ուշ, քան 48 ժամ առաջ՝ նախքան դրա ուժի մեջ մտնելը: Սույն Համաձայնագրի կիրառումը կասեցրած Կողմը անմիջապես տեղեկացնում է մյուս Կողմին, երբ կասեցման հիմքերը այլևս կիրառելի չեն:

6. Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը մյուս Կողմին տրված գրավոր ծանուցման միջոցով: Սույն Համաձայնագիրը դադարում է ուժի մեջ լինել նման ծանուցման ամսաթվից 90 օր հետո:

Կատարված է 17 դեկտեմբերի, 2012թ. Բրյուսելում, բուլղարերեն, չեխերեն, դանիերեն, հոլանդերեն, անգլերեն, էստոներեն, ֆիններեն, ֆրանսերեն,

գերմաներեն, հունարեն, հունգարերեն, իտալերեն, լատվիերեն, լիտվերեն, մալթերեն, լեհերեն, պորտուգալերեն, ռումիներեն, սլովակերեն, սլովեներեն, իսպաներեն, շվեդերեն և հայերեն օրինակներով, ընդ որում՝ այս տեքստերից յուրաքանչյուրը հավասարապես նույնական է:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՇԵՆԳԵՆՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ (ACQUIS) ԱՄԲՈՂՁՈՒԹՅԱՄԲ ՉԿԻՐԱՌՈՂ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այն անդամ պետությունները, որոնց համար Շենգենյան կանոնագիրքը պար- տադիր իրավաբանական ուժ ունի, բայց որոնք դեռևս չեն տրամադրում Շենգենյան վիզաներ՝ սպասելով այդ նպատակով Խորհրդի համապատասխան որոշմանը, տրամադրում են ազգային վիզաներ, որոնց վավերությունը սահմանափակված է իրենց սեփական տարածքով:

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի՝ 2008 թվականի հունիսի 17-ի հմ.

582/2008/ԵՆ որոշման համապատասխան, որով ներդրվում է արտաքին սահմաններին անձանց ստուգման պարզեցված ռեժիմ՝ հիմք ընդունելով Բուլղարիայի, Կիպրոսի և Ռումինիայի կողմից իրենց տարածքներով տարանցելու նպատակով որոշ փաստաթղթեր իրենց ազգային վիզաներին միակողմանիորեն հավասարազոր ճանաչելը¹, ներդաշնակեցված միջոցներ են ձեռնարկվել պարզեցնելու համար Շենգենյան վիզա և Շենգենյան բնակության թույլտվություն ունեցողների տարանցումը այն անդամ պետությունների տարածքներով, որոնք դեռևս ամբողջությամբ չեն կիրառում Շենգենյան կանոնագիրքը:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ 10-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Միությունը կարող է մասնակիորեն կասեցնել Համաձայնագրի գործողությունը, մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը, Համաձայնագրի 14-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված ընթացակարգին համապատասխան, եթե 10-րդ հոդվածի իրա- կանացման մասով չարաշահումներ են տեղի ունենում մյուս Կողմի կողմից, կամ դրա իրականացումը հանգեցնում է սպառնալիքի՝ ուղղված հանրային անվտանգությանը:

10-րդ հոդվածի իրականացումը կասեցնելու դեպքում Համաձայնա-

գրով ստեղծված Համատեղ կոմիտեի շրջանակներում երկու Կողմերը նախաձեռնում են խորհրդակցություններ՝ նպատակ ունենալով լուծելու այն խնդիրները, որոնք հանգեցրել են կասեցման:

Որպես առաջնահերթություն՝ երկու Կողմերը հռչակում են իրենց հանձնա- ռությունը՝ ապահովել դիվանագիտական անձնագրերի բարձր մակարդակի փաստաթղթային անվտանգություն, մասնավորապես՝ դրանցում կենսաչափական տվյալ- ների ներդրմամբ: Միության մասով դա ապահովվելու է «Անդամ պետությունների կողմից տրվող անձնագրերում և ճամփորդական փաստաթղթերում անվտանգության տարրերի և կենսաչափական տվյալների չափանիշների մասին» 2004 թվականի դեկտեմբերի 13-ի Խորհրդի հմ. 2252/2004 կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան:

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՎԻԶԱՆԵՐԻ ԴԻՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Եվրոպական միությունը կակտիվացնի իր ջանքերը և կձգտի մինչև ԵՄ- Հայաստան վիզաների տրամադրումը դյուրացնելու վերաբերյալ համաձայնագրի ուժի մեջ մտնելը կազմել նվազագույն պահանջների ցանկ, որպեսզի ապահովի, որ հայաստանցի դիմողներին տրամադրվի համաձայնեցված և միասնական հիմնարար տեղեկատվություն՝ Վիզայի օրենսգրքի 47 (1)(ա) հոդվածի համաձայն, և նրանցից պահանջվի ներկայացնել սկզբունքորեն նույն օժանդակ փաստաթղթերը:

Վերը նշված տեղեկատվությունը լայնորեն տարածվում է (հյուպատոսական հիմնարկների տեղեկատվական ցուցանակների, տեղեկատվական թերթիկների, կայքերի և այլ միջոցներով):

ԴԱՆԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կողմերն ի գիտություն են ընդունում, որ սույն Համաձայնագիրը չի կիրառվում Դանիայի դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական ծառայություն- ների կողմից վիզաների տրամադրման ընթացակարգերի նկատմամբ:

Այս պարագայում նպատակահարմար է, որ Դանիայի և Հայաստանի իշխանությունները առանց ուշացման կնքեն կարճաժամկետ վիզաների տրամադրումը դյուրացնելու վերաբերյալ երկկողմ համաձայնագիր՝

Եվրոպական միության և Հայաստանի միջև Համաձայնագրի նմանատիպ պայմաններով:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կողմերն ի գիտություն են ընդունում, որ Համաձայնագիրը չի կիրառվում Միացյալ Թագավորության և Իռլանդիայի տարածքի նկատմամբ:

Այս պարագայում նպատակահարմար է, որ Միացյալ Թագավորության, Իռլանդիայի և Հայաստանի իշխանությունները կնքեն վիզաների տրամադրումը դյուրացնելու վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՍԼԱՆԴԻԱՅԻ, ՆՈՐՎԵԳԻԱՅԻ, ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԽՏԵՅՆՇՏԵՅՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կողմերն ի գիտություն են ընդունում Եվրոպական միության և Շվեյցարիայի, Իսլանդիայի, Լիխտենշտեյնի և Նորվեգիայի միջև առկա սերտ հարաբերությունները, մասնավորապես 1999 թվականի մայիսի 18-ի և 2004 թվականի հոկտեմբերի 26-ի համաձայնագրերի ուժով, որոնք վերաբերում են այս երկրների միացմանը Շենգենյան կանոնադրքի իրականացմանը, կիրառմանը և զարգացմանը:

Այս պարագայում նպատակահարմար է, որ Շվեյցարիայի, Իսլանդիայի, Լիխտենշտեյնի և Նորվեգիայի ու Հայաստանի իշխանությունները առանց ուշացման կնքեն կարճաժամկետ վիզաների տրամադրումը դյուրացնելու վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր՝ Եվրոպական միության և Հայաստանի միջև Համաձայնագրի նմանատիպ պայմաններով:

ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կողմերը համաձայնում են, որ Համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն ստեղծված Համատեղ կոմիտեն Համաձայնագրի իրականացման դիտանցում իրականացնելիս պետք է գնահատի համապատասխան ճամփորդական փաստաթղթերի անվտանգության մակարդակի ազդեցությունը Համաձայնագրի գործողության վրա: Այդ նպատակով

Կողմերը համաձայնում են կանոնավոր կերպով միմյանց տեղեկաց- նել ճամփորդական փաստաթղթերի անօրինական տարածումից խուսա- փելու, ճամփորդական փաստաթղթերի անվտանգության տեխնիկական հայեցակետերի զարգացման, ինչպես նաև ճամփորդական փաստա- թղթերի տրամադրման գործընթացի անհատականացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ և ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԻՋԻՆ ԱՌԱՆՅ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱՐՄԻՄԻԱՅԻ) ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ
ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ**

**Հետընդունման (ռեադմիսիայի) համաձայնագիրը
Եվրամիության և Հայաստանի միջև**

Եվրամիությունը և Հայաստանը 2013 թվականի ապրիլի 19-ին Բրյուսելում տեղի ունեցած արարողության ընթացքում ստորագրեցին առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին համաձայնագիրը (5860/13): Եվրամիության անունից համաձայնագիրը ստորագրեցին ԵՄ-ում Իռլանդիայի մշտական ներկայացուցիչ Ռորի Մոնթգոմերին և ԵՄ-ի ներքին գործերի հանձնակատար Սեսիլիա Մալմսթրոմը: Հայաստանի անունից համաձայնագիրը ստորագրեց արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Այս համաձայնագրի հիմնական նպատակն է փոխադարձության սկզբունքի հիման վրա ձևավորել արագագործ և արդյունավետ ընթացակարգեր, որոնցով կապահովվի նշված անձանց հայտնաբերումը և ապահով և կանոնավոր վերադարձը:

Այժմ արդեն համաձայնագիրն ուղարկվելու է Եվրոպական խորհրդարան՝ նախքան կնքումը վերջինիս համաձայնությունը ստանալու նպատակով: Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի երկու կողմերի՝ ներքին ընթացակարգերի ավարտի մասին միմյանց ծանուցելու ամսաթվին հաջորդող երկրորդ ամսվա առաջին օրը, 2012 թվականի դեկտեմբերին ստորագրված՝ վիզաների դյուրացման համաձայնագրի հետ միասին:

Համաձայնագրի գործողությունը չի տարածվում Միացյալ Թագավորության, Իռլանդիայի և Դանիայի նկատմամբ:

Հիմնական դրույթները

Համաձայնագիրը վերաբերում է թե՛ երկու կողմերի սեփական քաղաքացիների, թե՛ երրորդ պետությունների կամ քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունմանը: Վերջիններիս պարագայում հետընդունումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի խիստ պայմանների

պահպանմամբ: Դրանք ներառում են, մասնավորապես, հետևյալ պայմանները.

- Համապատասխան անձինք պետք է պարտադիր կերպով ունենան այն պետությունից ստացած՝ գործող վիզա կամ բնակության թույլտվություն, ուր նրանք պետք է վերադառնան («Դիմումին պատասխանող պետություն»), կամ
- Համապատասխան անձինք պետք է Դիմումին պատասխանող պետության տարածքից ուղղակիորեն և ապօրինաբար մուտք գործած լինեն հետընդունման համար դիմող պետության («Դիմող պետություն») տարածքը:

Երրորդ պետությունների քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց հետընդունման պարտավորությունը կիրառելի չէ, եթե.

- Համապատասխան անձը Դիմումին պատասխանող պետությունում գտնվել է միայն միջազգային օդանավակայանի տարանցիկ ուղևորների սրահում, կամ
- Դիմող պետությունը համապատասխան անձին տվել է վիզա կամ բնակության թույլտվություն, որի գործողության ժամկետն ավելի երկար է, քան այն փաստաթղթի գործողության ժամկետը, որը տվյալ անձը կարող է ստացած լինել Դիմումին պատասխանող պետությունից:

Բնականաբար, համաձայնագիրը որևէ առումով չի ազդում Եվրամիության և Հայաստանի՝ միջազգային իրավունքի նորմերից բխող պարտականությունների և պարտավորությունների վրա:

Համաձայնագիրը նաև ներառում է մի շարք այլ ընթացակարգային կանոններ, ինչպիսիք են հետընդունման դիմումների ներկայացման ժամկետները, վերադարձվողների տեղափոխման եղանակները, տեղափոխման ծախսերը և վերադարձվողների անձնական տվյալների պաշտպանությունը: Համաձայնագրի կիրառությունը մշտադիտարկելու և տեխնիկական որոշակի խնդիրներ լուծելու նպատակով ստեղծվել է Հետընդունման հարցերի համատեղ հանձնաժողով:

Ընդհանուր իրադրությունը

Հետընդունման համաձայնագրերը սովորաբար կնքվում են վիզաների դյուրացման մասին համաձայնագրերին զուգահեռ: Վիզաների դյուրացման մասին համաձայնագիրը Հայաստանի հետ ստորագրվել է 2012 թվականի դեկտեմբերի 17-ին: Թե՛ վիզաների դյուրացման մասին համաձայնագիրը, թե՛ հետընդունման համաձայնագիրն ուժի մեջ են մտնելու միննույն օրը:

Հետընդունման համաձայնագրերով սահմանվում են հստակ պարտավորություններ և ընթացակարգեր Եվրամիության անդամ պետությունների և երրորդ պետությունների իրավասու մարմինների համար, մասնավորապես՝ դրույթներ առ այն, թե երբ և ինչպես վերադարձնել կողմերի տարածքներում ապօրինաբար բնակվող անձանց: Հետընդունման համաձայնագրերը կարգավորում են ոչ միայն համաձայնագրի կողմերի՝ ապօրինաբար միմյանց տարածքներում գտնվող քաղաքացիների, այլ նաև երրորդ պետությունների՝ անօրինական կարգավիճակ ունեցող քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող և անօրինական կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ, սակայն պայմանով, որ վերջիններս պետք է ակնհայտ առնչություն ունենան Դիմումին պատասխանող պետության հետ (օրինակ՝ վերջինիցս ստացած լինեն վիզա կամ բնակության թույլտվություն): Հետընդունման համաձայնագրերի կիրառության ընթացքում երաշխավորվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ մարդու իրավունքների լիարժեք հարգումը և պահպանումը:

Մոնիտորինգի հաշվետվություն

Համաձայնագիր Եվրոպական միության և
Հայաստանի Հանրապետության միջև վիզաների
տրամադրումը դյուրացնելու մասին

ԷԴԻՑ ՊՐԻՆՏ

Երևան, Թումանյան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



EDIT PRINT

12 Tumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am